

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ *Գազիկ Տեր-Հարությունյան*

Հայ-ռուսական համագործակցությունը (որը նոր թափ ստացավ նախագահներ Ս. Սարգսյանի եւ Դ. Մեդվեդեւի 2010թ. օգոստոսյան հանդիպումից հետո) մի քանի ռազմավարական հարթություն ունի: Մասնավորապես, վերոնշյալ հանդիպման արդյունքում Գյումրիում տեղակայված 102-րդ ռազմակայանի վերաբերյալ պայմանագիրը երկարաձգվեց (մինչեւ 2044թ.) եւ նորացվեց (ռուսաստանյան կողմն ապահովում է նաեւ ՀՀ անվտանգությունը): Հայկական տեսանկյունից այդ վերջին հանգամանքն արտակարգ կարեւորություն ունի, քանի որ այդպիսով երաշխավորվում է Հայաստանի անվտանգությունը թուրքական հնարավոր ագրեսիայից: Հարկ է անրագրել, որ Թուրքիան Արցախյան հակամարտության փաստացի մասնակից է. այդ երկիրն Ադրբեջանին առաջօր սպառազինություն է մատակարարում եւ աջակցում զինվորական «խորհրդականներով», իսկ պատերազմի տարիներին օգնում էր նաեւ այսպես կոչված «կամավորներով»: Սակայն գործն այսքանով միայն չէր սահմանափակվում: Երկու անգամ՝ 1992 եւ 1993թթ., Թուրքիան պատրաստ էր անմիջականորեն միջամտելու Ղարաբաղյան հակամարտությանը եւ ներխուժելու Հայաստան, եւ երկու անգամ էլ Ռուսաստանի վճռական միջամտությունն էր, որ կանխեց պատերազմը: Նկատենք, որ այս խնդրում ներկայիս իրավիճակը շատ չի տարբերվում նախկինից. Թուրքիան ամրապնդել է Ադրբեջանի «ավագ եղբոր» կարգավիճակը, եւ կասկած չի հարուցում, որ ադրբեջանական հակահայկական հռետորաբանությունն ու ռազմատենչությունը պայմանավորված են ոչ միայն «նավթադուլարների» առատությամբ, այլեւ առաջին հերթին թուրքական ռազմաքաղաքական-գաղափարախոսական աջակցությամբ:

Ադրբեջանը՝ թուրքական «ֆորպոստ». Միեւնույն ժամանակ, թուրքական էքսպանսիայի զսպումը խիստ կարեւոր է ոչ միայն Հայաստանի, այլեւ Ռուսաստանի ազգային շահերի տեսանկյունից: Դա պայմանավորված է հետեւյալ գործոններով: Կիրառելով «մեկ ազգ, երկու պետություն» քաղտեխնոլոգիան՝ Թուրքիան եւ Ադրբեջանը հաստատել են սերտ համագործակցություն: Նման ձեւաչափը խիստ հարմարավետ է երկու կողմերի համար էլ, քանի որ թույլ է տալիս ճկուն եւ բազմակողմանի

քաղաքականություն վարել, հատկապես հաշվի առնելով Ադրբեջանի ԱՊՀ անդամ լինելու հանգամանքը: Այդ համատեքստում Ադրբեջանը հանդիսանում է Թուրքիայի «Ֆորպոստը» հետխորհրդային տարածքում՝ ինչպես Չարավային Կովկասում, այնպես էլ Կենտրոնական Ասիայում եւ բուն Ռուսաստանում (Չյուսիսային Կովկասում եւ թուրքալեզու բնակչություն ունեցող մարզերում): Մասնավորապես՝ Ադրբեջանը Թուրքիայի համար տրանզիտային տարածք է, որով Ռուսաստան են «ներկրվում» ահաբեկչությունը եւ անջատողականությունը: Ներկայիս միջքաղաքակրթական հարաբերությունների սրումը սաստկացնում է այդ միտումը. անկայունության գոտին Ռուսաստանի որոշ տարածաշրջաններում անշեղորեն ընդլայնվում է: Պատահական չէ, որ STRATFOR կազմակերպության ղեկավար Ջորջ Ֆրիդմանի կանխատեսումներով՝ ապագայում սահմանը Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ կարող է անցնել Չյուսիսային Կովկասով, իսկ նման կարգի կանխատեսումներն ածանցվում են գլխավոր ռազմավարական մտահղացումներից:

Թուրքիայի դերակատարումը բազմաբեւեռ աշխարհում. Ինչպես հայտնի է, Թուրքիան չի սահմանափակվում միայն հետխորհրդային տարածքի երկրներում իր ներկայության մեծացումով: Ժամանակակից Թուրքիայում բուռն զարգացում են ապրում ծավալապաշտական եւ ռեւանշիստական գաղափարախոսությունները՝ նեոսուննիզմը, նեոպանթուրքիզմը եւ պանիսլամիզմը: Գաղափարախոսության նման արմատականացմանը ոչ վերջին հերթին նպաստում են տնտեսական հաջողությունները, առանց որոնց այսօր դժվար է պատկերացնել գաղափարախոսական-էքսպանսիոնիստական հիմնադրույթների իրագործումը: Ներկայումս այդ երկրի տնտեսությունը մեծությամբ գրավում է աշխարհում 16-րդ տեղը եւ, համաձայն որոշ կանխատեսումների, տեսանելի ապագայում կարող է անգամ մտնել տասնյակի մեջ:

Բոլոր պարագաներում պետք է արձանագրել, որ Թուրքիայի հավակնությունները կտրուկ աճել են, այն ձգտում է ձեռք բերել գլոբալ «խաղացողի» կարգավիճակ: Նրան արդեն չի կարելի ընկալել որպես ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի խիստ վերահսկողության տակ գտնվող եւ լոկ վերջիններիս ռազմաքաղաքական պլաններն իրագործող մի երկիր: Այս վերջին հանգամանքը միշտ չէ, որ աղեկվատ է ընկալվում ռուսաստանյան քաղաքական ընտրանու մի մասի կողմից, որոնք իրենց հարաբերությունների ամրապնդումը Թուրքիայի հետ (բացի զուտ տնտեսական նկատառումներից) հիմնավորում են այդ երկիրը ԱՄՆ-ից եւ ՆԱՏՕ-ից հեռացնելու, «պոկելու» եւ ռուսաստանյան ազդեցության ոլորտում ընդգրկելու

անհրաժեշտությամբ: Տպավորությունն այնպիսին է, որ ռուսաստանյան քաղաքական էլիտայի այդ մասը դեռևս ղեկավարվում է, ինչ-որ իմաստով, խորհրդային տարիներին բնորոշ աշխարհաքաղաքական տրամաբանությամբ: Մինչդեռ այդ ոլորտում պետք է հաշվի առնել հետևյալը:

Ի տարբերություն Սառը պատերազմի դարաշրջանի, ներկայիս բազմաբեկեռ (կամ, ըստ որոշ վերլուծաբանների՝ «առանց բեկեռների») աշխարհում թուրքիան ԱՄՆ-ի կողմից այլևս դիտարկվում է ոչ թե որպես «պատմեշ» Ռուսաստանի դեմ, այլ ավելի շուտ՝ իսլամական աշխարհի առաջատար, որն իր ազդեցությունն է տարածում նաև Ռուսաստանի իսլամ բնակչության վրա: Նշենք նաև, որ թուրքիան որպես «պատմեշ» ծառայեցնելու արեւմտյան ծրագրերը, թերևս, այժմ էլ ակտուալ են, բայց արդեն չինական հնարավոր տնտեսական-քաղաքական էքսպանսիային դիմակայելու առումով:

Թուրքիան որպես մոդել իսլամական աշխարհի համար. Արաբական աշխարհում այսօր ընթացող զարգացումները գրեթե անխուսափելիորեն վերածնելու են (նվազագույնը՝ քաղաքական բովանդակության առումով) այսպես կոչված Նոր Մերձավոր Արեւելքի աշխարհաքաղաքական քարտեզը: Հստակ են նաև այն միտումները (դրանք, ի դեպ, ներկայացված են ԱՄՆ Ազգային հետախուզության խորհրդի եւ Անվտանգության եվրոպական ինստիտուտի կողմից՝ «Գլոբալ կառավարումը 2025թ.» ծրագրային-կանխատեսումային ուղղվածության զեկույցում), որոնց արդյունքում տարածաշրջանը, հատկապես քաղաքակրթական իմաստով, որոշակիորեն մեկուսանալու է «մնացյալ աշխարհից», եւ այնտեղ ձեւավորվելու է, եթե կարելի է այդպես ասել, «ուրույն իսլամական աշխարհ»: Այդ աշխարհում թուրքիան, համաձայն ներկայիս արեւմտյան քաղաքագիտական պատկերացումների, առանձնահատուկ դերակատարում պետք է ունենա, քանի որ թուրքերը կարողացել են, գոնե ինչ-որ չափով, համատեղել աշխարհիկ ժողովրդավարությունը եւ իսլամական-կրոնական ավանդույթները: Այսինքն՝ թուրքական ներկայիս զարգացման մոդելը բավական հրապուրիչ է համարվում, հատկապես Միացյալ Նահանգների կողմից:

Թերևս, պատահական չէ, որ Նոր Մերձավոր Արեւելքում ընթացող զարգացումները բովանդակային առումով հիշեցնում են այն, ինչ տեղի ունեցավ Թուրքիայում, երբ իշխանության եկան Ռեջեփ Էրդողանի չափավոր իսլամիստները: Ավելացնենք նաև, որ «չափավոր իսլամիզմի» քաղաքական տեխնոլոգիան հենվում է RAND կորպորացիայի «Չափավոր իսլամական ցանցերի կազմավորումը» նախագծի վրա: Այսինքն՝ կան հիմքեր պնդելու, որ Թուրքիայի դերակատարման եւ, մասնավորապես,

նրա՝ որպես իսլամական աշխարհի «համակարգողի», վերաբերյալ ներկայիս պատկերացումները ոչ թե միայն ստեղծված իրավիճակից են բխում, այլ նախնական ռազմավարական մշակումների արդյունք են:

Այս ամենի առիթով արձանագրենք նաեւ, որ արաբական աշխարհում կատարվող փոփոխությունները եւ թուրքական ազդեցության հնարավոր աճը Նոր Մերձավոր Արեւելքում (ինչպես դա հետեւում է, օրինակ, Լիբիայի հետ կապված զարգացումներից, որտեղ Ռուսաստանը զգալի ներդրումներ ուներ) նույնպես միտված են լինելու Ռուսաստանի տնտեսական ներկայությունն այդ տարածաշրջանում սահմանափակելուն:

Ապագայի հնարավոր սցենարներ. Միեւնույն ժամանակ, փորձագիտական հանրության մի ստվար հատված համոզված է, որ չափավոր իսլամիզմը վաղ թե ուշ թեքվելու է ֆունդամենտալիզմի կողմը, եւ այդ միտումն այսօր նկատվում է Թուրքիայում: Դա վկայում է այն մասին, որ բազմաբեւեռ աշխարհում ռազմաքաղաքական, տնտեսական եւ քաղաքակրթական փոփոխականների ստվարությունը թույլ չի տալիս միանշանակ ծրագրել ապագայի զարգացումները, եւ նման պարագայում ավելի նպատակահարմար է կիրառել սցենարային մշակումներ: Որպես հնարավոր ուղղություններ նման մշակումների համար ռուսաստանյան եւ հայկական վերլուծաբանական հանրությանը կարելի է առաջարկել նվազագույնը երկու տրամագծորեն հակառակ սցենարներ:

Պայմանականորեն «Հզոր Թուրքիա» կոչված սցենարում այդ երկիրը ռազմաքաղաքական ու տնտեսական առումով հզորանում է (մասնավորապես՝ տիրապետում է միջուկային զենքին) եւ վերածվում իսլամական աշխարհի առաջատարի: Նման տերության առկայությունն ակնհայտորեն լուրջ նարտահրավեր է, մասնավորապես, հայ-ռուսական դաշինքին: Միեւնույն ժամանակ, բացառված չէ «Մասնատված Թուրքիա» տարբերակը, երբ քրդական գործոնի եւ ընդհանրապես այդ երկրում բնակվող բազմաթիվ այլ ազգերի ինքնության խնդիրների հետ կապված ճգնաժամը հանգեցնում է ներքին ոլորտում անկառավարելի զարգացումների, որոնք կարող են հանգեցնել Թուրքիայի կազմալուծմանը: Կարծում ենք, որ նույն Ռուսաստանի (բնականաբար՝ նաեւ Հայաստանի) համար անհամեմատ ձեռնտու է ունենալ նման կարգավիճակ ունեցող Թուրքիա:

Արդի իրողություններ. Սակայն անկախ ապագային վերաբերող սցենարներից, պետք է արձանագրել, որ Թուրքիան ներկայումս դիվանագիտորեն բավական հաջող խուսանավում է իր արեւմտյան վաղեմի դաշնակիցների եւ ռուսաստանյան նորաթուխ գործընկերների միջեւ՝ նկատի ունենալով, սակայն, իր՝ զուտ թուրքական շահերը:

Օրինակ, այս տարվա մարտին Մոսկվայում Թուրքիայի վարչապետ Էրդողանը մեծ շուքով նշեց 1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրի 90-ամյակը (հիշեցնենք, որ այդ պայմանագրով, մասնավորապես, Թուրքիային անցան Կարսը եւ Սուրմալուն): Սա մոտավորապես նման է այն բանին, որ, ասենք, ճապոնիայի վարչապետը Մոսկվայում նշի Պորտսմուտի հաշտության փառավոր տարելիցը, կամ էլ Գերմանիայի կանցլերը տոնի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի այսինչ ամյակը: Ակնհայտ է, որ հայ-ռուսական փորձագիտա-քաղաքական խորհրդատվությունների մեխանիզմի առկայության պայմաններում կարելի կլիներ խուսափել սխալներից: Բանն այստեղ հույզերը չեն, որոնք, ի դեպ, նույնպես պետք է հաշվի առնել. հայտնի բողոքի ցույցերը պետք է որ ուրախացնեին մեր բարին չկամեցողներին: Հասկանալի է, որ Ռուսաստանը գլոբալ քաղաքականություն է վարում, եւ միշտ չէ, որ կարող է հաշվի առնել իր գործընկերների զգացմունքները: Բայց այս դեպքը հակասում է Ռուսաստանի ազգային շահերին եւ պետք է ընկալվի որպես դիվանագիտական անհաջողություն:

Այդ առիթով պետք է հիշել, որ աշխարհաքաղաքականությունը բավական ճշգրիտ գիտություն է. սկսած 18-րդ դարից՝ Ռուսաստանը 12 պատերազմ է մղել Թուրքիայի դեմ: Կարող էր եւ 13 լինել, բայց Երկրորդ աշխարհամարտից հետո Թուրքիայի թիկունքին կանգնեցին ԱՄՆ-ը եւ Բրիտանիան: Իսկ նման պատմական օրինաչափությունները պետք է հաշվի առնել եւ ներկայի վերլուծություններում, եւ ապագայի կանխատեսումներում:

**ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ»
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Ռուրբեն Մելքոնյան**

Թուրքական քաղաքական մեքենան ժամանակ առ ժամանակ որոշ սրբագրումներ է մտցնում իր «հայկական քաղաքականության» մեջ, որի բնույթը, սակայն, շարունակում է մնալ թշնամական: Ներկայումս տեղի ունեցող զարգացումները փաստում են, որ Թուրքիան փորձում է Հայաստանի եւ Հայության նկատմամբ կիրառել նաեւ նոր մարտավարական մեթոդներ:

**Պայքար Հայոց ցեղասպանության
միջազգային ճանաչման դեմ**

Գաղտնիք չէ, որ Թուրքիայում գործում է կառույց, որն էլ մշակում եւ իրականացնում է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարի քաղաքականությունը: Սակայն պետք է փաստել, որ տասնամյակներ շարունակ կիրառված նույնաճ քաղաքականությունը ոչ միշտ է եղել արդյունավետ, ինչը ստիպում է թուրքական քաղաքական մեքենային որոշ փոփոխություններ կատարել իր գործելակերպում:

Բայց սա չի նշանակում, թե Թուրքիան լիովին հրաժարվում է Ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարի իր հին մեթոդներից, որոնք այսօր եւս, փոքր-ինչ պակաս ինտենսիվությամբ, կիրառվում են: Ամեն ապրիլի 24-ին նախորդող ժամանակաշրջանում թուրք դիվանագետների պատվիրակություններ են գործուղվում տարբեր երկրներ՝ նպատակ ունենալով կասեցնել Թուրքիայի համար անցանկալի եզրույթների գործածումը կամ բանաձեւերի ընդունումը. թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, արտաքին քաղաքական գերատեսչության պատասխանատուներ հանդես են գալիս այլ պետություններին ուղղված շանտաժային, երբեմն կոպիտ հայտարարություններով: Սրանց զուգահեռ, Թուրքիան լուրջ ֆինանսական միջոցներ է տրամադրում զանազան վարձու պատմաբանների, որոնք հանդես են գալիս Հայոց ցեղասպանության փաստը հերքող գրքերով, հոդվածներով եւ այլն:

Վերջին շրջանում Թուրքիան, հաշվի առնելով աշխարհում եւ հենց իր ներսում տեղի ունեցող գործընթացները, ձգտում է հին՝ «կացնային»

մեթոդին զուգահեռ մշակել եւ կիրառել ավելի նուրբ, ճկուն քաղաքակա-
նություն, որը շատ հաճախ քողարկվում է «պրոհայկական» միջոցառում-
ների անվան տակ: Միեւնույն ժամանակ փաստենք, որ թուրքական
հասարակությունում որոշ անհատների գիտակցության մեջ իրականում
տեղի է ունենում Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման առումով
որոշակի տեղաշարժ, ինչը, սակայն, թուրքական քաղաքական մեքենան
փորձում է ուղղորդել եւ կառավարել իրեն ձեռնտու տարբերակով:
Մասնավորապես՝ մեծ աղմուկ բարձրացավ, երբ 2008 թվականի վերջին
մի խումբ մտավորականներ թուրքիայում նախաձեռնեցին «Ներողություն
ենք խնդրում» միջոցառումը, որը սահմանում էր. *«Իմ խիղճը չի ընդունում
անտարբերությունն ու ուրացումը հանդեպ Մեծ եղեռնի, որին ենթարկ-
վեցին օսմանյան հայերը 1915 թվականին: Ես մերժում եմ այս անարդա-
րությունը, կիսում եմ իմ հայ քույրերի եւ եղբայրների զգացմունքներն ու
ցավերը եւ ներողություն եմ խնդրում նրանցից»:* Այս միջոցառումը վերած-
վեց նաեւ ինտերնետային ստորագրահավաքի, որին կարճ ժամանակում
միացան շուրջ 30 հազար մարդիկ: Իհարկե, սա աննախադեպ էր թուր-
քիայում, սակայն որոշ ժամանակ անց այդ միջոցառումը քաղաքակա-
նացվեց եւ այսօր էլ շարունակում է ոչ բացահայտ, բայց մնալ թուրքական
քաղաքական մեքենայի գինանոցում: Մասնավորապես, այս միջոցառման
լայն արձագանքին զուգահեռ, թուրքական արտաքին քաղաքական գերա-
տեսչությունը տարբեր երկրների խորհրդարաններին սկսեց հիմնավո-
րումներ ներկայացնել Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւերի
աննպատակահարմարության մասին՝ վկայակոչելով, որ թուրքիայում
արդեն սկսվել է պատմության հետ առերեսվելու շարժում, եւ բանաձեւերի
ընդունումը կխոչընդոտի դրան:

Անշուշտ, այդ միջոցառմանը միացած եւ իրենց ստորագրությունը
դրած մարդկանց գերակշիռ մասն ազնիվ է իր մղումներում եւ իրոք կիսում
է հայերի վիշտը, սակայն միեւնույն ժամանակ պետք է նկատել այլ
հանգամանքներ եւս: Նախ՝ «Ներողություն ենք խնդրում» միջոցառման
զլխավոր կազմակերպիչներից մեկը՝ թուրք հայտնի հրապարակախոս
Բասքըն Օրանը, ի պատասխան իրենց հասցեին հնչող մեղադրանքների,
հայտարարեց. *«Թուրքիայի իշխանությունները պետք է աղոթեն մեր միջո-
ցառման համար, քանի որ դրա շնորհիվ ամբողջ աշխարհում դադարեց
Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձեւերի ընդունումը»:* Ստորա-
գրահավաքին միացած մեկ այլ մտավորական՝ Յավուզ Բինգյուլը, վերջերս
ավելի բացեց փակագծերը՝ հայտարարելով. *«Մենք տեքստում չենք դրել
«ցեղասպանություն» բառը, եւ ես երբեք չեմ ընդունի, որ 1915-ին տեղի է
ունեցել ցեղասպանություն: Այս ամբողջ միջոցառումը կազմակերպվել էր,*

որպեսզի այդ հարցը դուրս գա միջազգային օրակարգից: Ես էլ միացա այդ ամենին, որպեսզի այդ հարցը վերջանա, եւ ներողություն խնդրեցի: Ներողություն խնդրելը հեշտ գործ է»:

Մյուս կարեւոր խնդիրն այն է, որ հայերից ներողություն խնդրողները, միեւնույն ժամանակ, ցանկացած փոխհատուցման գաղափարի ամենակատաղի հակառակորդներն են եւ անգամ հրապարակային ելույթներում հայտարարում են, որ 1915-ի համար ֆինանսական կամ տարածքային որեւէ փոխհատուցում չի կարող լինել, առավելագույնը՝ Թուրքիան կարող է ներողություն խնդրել հայերից, եւ այդքանով «հարցը պետք է փակվի»:

Վերը նշված զարգացումները լիովին տեղավորվում են թուրքական իշխանությունների ծրագրերի մեջ, եւ նաեւ դա է պատճառը, որ այդ միջոցառումները որեւէ կերպ չեն խոչընդոտվում, իսկ սա պատահական լինել չի կարող մի երկրում, որտեղ ամենաամենեղ բողոքի ցույցը կարող է դաժանորեն ճնշվել: Այսինքն՝ այս ամենը տեղի է ունենում թուրքական իշխանությունների համաձայնությամբ եւ ուղղորդմամբ, ու պատահական չէ, որ այդ միջոցառումների ընդդիմադիր կազմակերպիչները բավական լավ կապեր ունեն թուրքական իշխանությունների բարձրագույն օղակներում: Նմանատիպ միջոցառումների միջոցով թուրքական իշխանությունները նաեւ թուլացնում են հասարակության որոշ շերտերում առկա լարվածությունը, որը բխում է պետական թեզի հետ անհամաձայնությունից: Եվ ամենակարեւորն այն է, որ միջազգային ասպարեզում որոշակիորեն փոխվում է Թուրքիայի իմիջը, եւ այդ ամենն արվում է մեծ մասամբ «պալատական ընդդիմադիրների» միջոցով:

Խոսելով Հայոց ցեղասպանության խնդրի նկատմամբ Թուրքիայի հասարակության որոշակի շերտերում տեղի ունեցող փոփոխությունների մասին՝ հարկ է անդրադառնալ նաեւ արդեն երկու տարի ապրիլի 24-ին թուրքական տարբեր քաղաքներում կազմակերպվող հիշատակի միջոցառումներին: Սրանք, իհարկե, ուշագրավ են եւ կարեւոր, սակայն պետք է հստակ գիտակցել, որ դրանց մասնակիցների թիվը 75 միլիոնանոց Թուրքիայում գրեթե աննշմարելի է: Օրինակ՝ այս տարվա ապրիլի 24-ի միջոցառմանը Ստամբուլի կենտրոնական Թաքսիմ հրապարակում հավաքվել են ընդամենը 300 մարդ, եւ այդ միջոցառման կազմակերպիչներից մեկի հետ մեր զրույցի ժամանակ նա նշեց, որ եթե չվախենային, ապա իրենց ցույցին կգար մոտ 2000 մարդ. այսինքն՝ սա է առավելագույն թվաքանակը: Ավելորդ չէ նկատել նաեւ, որ նմանատիպ միջոցառումների մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը ծախակողմյան քաղաքական հայացքներ ունեցող մարդիկ են, որոնց համար կարեւոր են ոչ թե

ազգային խնդիրները, այլ մարդու իրավունքների ոտնահարման եւ նմանատիպ այլ ընդհանրական ձեւակերպումները:

Համադրելով փաստերը՝ կարող ենք նշել, որ այսօր Թուրքիայում Հայոց ցեղասպանության խնդրի նկատմամբ գիտակցության փոփոխություն տեղի է ունենում ոչ թե հասարակության լայն խավերում, այլ ընդամենը անհատների խմբում, որը չի կազմում տոկոսային լուրջ պատկեր: Ուստի Թուրքիայի կողմից քարոզվող «լուրջ հասարակական փոփոխություններն» առավելապես նրա քաղաքականության որոշակի տարրերից են եւ չեն արտացոլում իրական պատկերը: Այս ամենը նաեւ ցույց է տալիս, որ Թուրքիան լրջորեն նախապատրաստվում է Հայոց ցեղասպանության հարյուրամյակին՝ 2015-ին, որի մասին բացահայտ հայտարարում են թուրք բարձրաստիճան պաշտոնյաները:

Այս ամենով հանդերձ, հարկ է նկատել նաեւ, որ սկսված գործընթացից հայկական կողմը եւս կարող է որոշակի օգուտներ քաղել: Օրինակ՝ Թուրքիայում «փոփոխություններին» գործընթացին զուգահեռ նկատվում է տեղեկատվական լուրջ հոսք, տպագրվում են գրքեր, փաստեր, որոնք մինչ այս փակ էին. մեր խնդիրն է դրանք գտելով՝ կիրառել մեր շահերի համար:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարի համատեքստում՝ այսօր Թուրքիայի քաղաքական օրակարգում սկսում է կարեւոր տեղ զբաղեցնել նաեւ Հայաստան–Սփյուռք տարանջատման խնդիրը: Մասնավորապես, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն հանձնարարականներ է տվել տարբեր երկրների իրենց դեսպաններին առավել սերտ աշխատել Սփյուռքի հայկական կառույցների հետ, անգամ ներկա գտնվել իրենց բնույթով հակաթուրքական միջոցառումներին ու փորձել առաջ տանել թուրքական թեզերը եւ ամենակարեւորը՝ ձգտել անջրպետներ ստեղծել Հայաստան–Սփյուռք հարաբերություններում: Կուլիսային քայլերին զուգահեռ՝ Թուրքիան նաեւ հրապարակային որոշ գործողություններ է իրականացնում, որոնցից վերջինը ԵՒԽՎ-ի գարնանային նստաշրջանում Էրդողանի հայտարարությունն էր այն մասին, թե իբրեւ Հայաստանը վախենում է Սփյուռքից եւ դրա համար էլ Թուրքիայի հանդեպ նման կարծր քաղաքականություն է վարում: Ի դեպ, այս բնույթի հայտարարությունները նոր չեն Էրդողանի համար. ավելի վաղ նա հայտարարել էր, թե Հայաստանը պատանդ է Սփյուռքի ձեռքին: Կիրառելով ապատեղեկատվության մեթոդներ՝ Թուրքիան փորձում է արհեստական խնդիրներ եւ անջրպետներ առաջացնել Հայաստանի եւ Սփյուռքի միջեւ: Սակայն ցավալի է, որ թուրքական մամուլում տեղ գտած ապատեղեկատվությունը

կամ ուղղորդված կեղծիքը երբեմն թարգմանաբար ու առանց մասնագիտական զտման տեղ է գտնում հայկական լրատվամիջոցներում, եւ փաստացի մենք հայտնվում ենք թուրքական տեղեկատվական որոգայթներում:

Հակահայկականության «կայուն աճ» Թուրքիայում

Բազմաթիվ են փաստերը, որոնք ապացուցում են Թուրքիայում աճող հակահայկական տրամադրությունների մասին, եւ բնական է, որ այդ տրամադրությունները որոշիչ դեր են խաղում նաեւ քաղաքական գործընթացների ժամանակ: Ըստ վերջին սոցիոլոգիական հարցումների, Թուրքիայի բնակչության 73 տոկոսը խիստ բացասաբար է վերաբերվում հայերին: Չնայած վերը նշված մակերեսային փոփոխություններին, այսօր Թուրքիայում ազգայնամոլական հիստերիան թելադրող է, որին կարելի է հանդիպել հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում:

2011թ. ապրիլի 24-ին պատմական Սասունի գավառին մերձակա մի վայրում տեղակայված թուրքական զորամասերից մեկում սպանվեց հայազգի զինծառայող Սեւակ Բալըքչը: Անմիջապես տարածվեց պաշտոնական տեսակետը, թե Սեւակի մահվան պատճառը զինծառայակիցներից մեկի անզգուշությունն է: Սակայն այլ աղբյուրներ փաստում են, որ հայորդուն սպանած թուրք զինվորը ծայրահեղ ազգայնամոլական «Գորշ գայլեր» խմբավորման երիտասարդական թելի անդամ է, եւ հավանական է, որ Սեւակը դարձել է պանթուրքիստների հերթական զոհը:

Թուրքիայում մոտեցող խորհրդարանական ընտրությունները ստիպում են քաղաքական գործիչներին եւս խստացնել ազգայնամոլական հռետորաբանությունը, որը միտված է ընտրողների շրջանում նրանց հեղինակության բարձրացմանը: Հենց այս համատեքստում պետք է դիտարկել այն, որ քաղաքական եւ ոչ մի կուսակցության ցուցակում չընդգրկվեցին հայազգի թեկնածուներ: Հիշեցնենք, որ Թուրքիայում տեւական ժամանակ քննարկվում էր հայազգի թեկնածուներ ընդգրկելու հավանականության հարցը, սակայն թուրքական հասարակության մեջ տիրող հակահայկականության բարձր տոկոսը ստիպեց քաղաքական ուժերին զերծ մնալ այնպիսի քայլից, որն ընտրությունների ժամանակ ուղղակիորեն կազդեր իրենց հեղինակության վրա:

Վերջին ժամանակներս միջազգային լրատվամիջոցների, ինչպես նաեւ քաղաքական գործիչների ուշադրության կենտրոնում է հայտնվել Կարսում մի քանի տարի առաջ տեղադրված, այսպես կոչված, հայ-թուրքական բարեկամությունը խորհրդանշող արձանը: Վարչապետ Էրդողանն իր նախընտրական քարոզարշավում այս արձանը որակեց

որպես սարսափելի եւ հրահանգեց քանդել այն: Սակայն Թուրքիայի վարչապետի այս քայլն ամենեւին էլ պայմանավորված չէր վերջինիս էսթետիկական հայացքներով: Նախ նշենք, որ մինչեւ Էրդողանի սկանդալային հայտարարությունն այդ արձանը հայտնի էր փոքր թվով մարդկանց եւ Թուրքիայի վարչապետը հայտնիությամբ օժտելով արձանը՝ այն դարձրեց քաղաքական տեխնոլոգիաների գործիք: Հայ-թուրքական, իբրեւ թէ, բարեկամությունը խորհրդանշող արձանի քննադատությամբ Էրդողանը հագուրդ տվեց Կարսի մարզում բնակվող աղբբեջանցիների ազգայնամոլական կրքերին: Խնդիրն այն է, որ խորհրդարանական ընտրություններին ընդառաջ՝ իշխող ԱԶԿ-ն որոշակիորեն պայքարում է Ազգայնական շարժում կուսակցության ընտրազանգվածին իր կողմը գրավելու համար, ուստի նրան անհրաժեշտ է իր քարոզարշավի մեջ ներառել նաեւ ազգայնամոլական հստակ երանգներ: Եվ կարող ենք փաստել, որ Կարսում ԱԶԿ քարոզարշավի ազգայնամոլական երանգն ապահովեց հենց այդ արձանի շուրջ բարձրացած աղմուկը:

ԹՈՒՐՔԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ

Հայկ Գաբրիելյան

Հունիսի 12-ին Թուրքիայում կայանալու են խորհրդարանական ընտրություններ: Սկզբում դրանց մասնակցելու հայտ էր ներկայացրել 24 կուսակցություն, սակայն Թուրքիայի Բարձրագույն ընտրական խորհուրդը (YSK) չհաստատեց 6-ի մասնակցությունը. արդյունքում մնաց 18 կուսակցություն: Ըստ ամենայնի, հիմնական պայքարն ընթանալու է վարչապետ Էրդողանի գլխավորած Արդարություն եւ զարգացում կուսակցության (ԱԶԿ), քեմալական ուղղությունը ներկայացնող, երկրի գլխավոր ընդդիմադիր ուժ ժողովրդա-հանրապետական կուսակցության (ԺՀԿ) եւ Ազգայնական շարժում կուսակցության (ԱՇԿ) միջեւ: Չպետք է մոռանալ նաեւ քրդական Խաղաղություն եւ ժողովրդավարություն կուսակցության (ԽԺԿ) մասին, որն ընտրությունների ժամանակ հանդես է գալու անկախ թեկնածուներով (խորհրդարանում կուսակցական խմբակցություն ձեւավորելու հեռանկարով): Հիշեցնենք, որ թուրքական խորհրդարան մուտք գործելու համար քաղաքական կուսակցություններից պահանջվում է հաղթահարել 10 տոկոսանոց նախընտրական բարձր արգելքը: Ներկայիս դրությամբ դա ի վիճակի են անել միայն երեք կուսակցություն՝ ԱԶԿ, ԺՀԿ, ԱՇԿ:

Ընտրություններից առաջ այս երեք կուսակցությունները ներկայացրին իրենց նախընտրական ծրագրերը: ԱԶԿ-ն միանգամից երկու գրքույկ թողարկեց. դրանցից մեկում նշված էին երկրի ձեռքբերումները նրա իշխանության 8.5 տարիների ընթացքում, իսկ մյուսում ներկայացվում էր, թե իր հաղթանակի դեպքում երկիրն ինչ ձեռքբերումներ կարող է ունենալ մինչեւ 2023 թվականը (Թուրքիայի Հանրապետության /ԹՀ/ հիմնադրման 100-ամյակը): Դրանում ԱԶԿ-ն շատ կարեւոր խոստումներ է տալիս՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ճակատներում:

Ներքին. Թուրքիան լինելու է առավել ժողովրդավար եւ ազատական երկիր: Վերացվելու է 1980 թվականի սեպտեմբերի 12-ին ԹՀ ողջ պատմության ընթացքում տեղի ունեցած ամենաարյունալի ռազմական հեղաշրջման արդյունքում 1982 թվականի նոյեմբերի 7-ին ընդունված «ռազմական» սահմանադրությունը: Փոխարենը մշակվելու է նոր սահմանադրություն:

Մինչև 2023 թվականը ԹՀ-ն տնտեսական պլանում տեղ է զբաղեցնելու աշխարհի առաջատար երկրների (G-20) տասնյակում (ներկայումս 16-րդն է)¹: ՀՆԱ-ն 2023 թվականին կազմելու է 2 տրիլիոն 64 միլիարդ դոլար (2015-ին՝ 1 տրիլիոն 76 միլիարդ դոլար, 2019-ին՝ 1 տրիլիոն 486 միլիարդ դոլար): Նախորդ տարի այն կազմել է մոտ 740 միլիարդ դոլար: Մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը 2023-ին կազմելու է 25.076 դոլար (2015-ին՝ 14.000 դոլար, 2019-ին՝ 18.685 դոլար), նախորդ տարի այն կազմել է 10.079 դոլար: Արտահանումը 2023-ին հասնելու է 500 միլիարդ դոլարի (2015-ին՝ 201 միլիարդ դոլար, 2019-ին՝ 317 միլիարդ դոլար): Ի դեպ, երբ 2002 թվականին ԱԶԿ-ն եկավ իշխանության, թուրքական արտահանումը կազմել էր ընդամենը 36 միլիարդ դոլար, իսկ մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը՝ 2.300 դոլար:

Մեծ ուշադրություն է հատկացվելու զբոսաշրջության զարգացմանը: Մինչև 2023 թվականը զբոսաշրջիկների թիվը հասցվելու է 50 միլիոնի, որոնք 50 միլիարդ դոլարի եկամուտ կապահովեն երկրին (2002-ին՝ 13 միլիոն զբոսաշրջիկ եւ 12 միլիարդ դոլար): Հարկ է նշել, որ 2010 թվականին ԹՀ է այցելել 28.6 միլիոն զբոսաշրջիկ: Այդ ցուցանիշով ԹՀ-ն աշխարհում զբաղեցրել է 7-րդ տեղը, իսկ զբոսաշրջությունից ստացված եկամուտների ցուցանիշով (20.8 միլիարդ դոլար)՝ 9-րդ տեղը: Փաստորեն, 2010 թվականին զբոսաշրջիկների թիվը, 2002 թվականի համեմատ, աճել է 116 %-ով, իսկ դրանից ստացված եկամուտները՝ 74.8 %-ով: Կանխատեսվում է, որ այս տարի ԹՀ կայցելի 30 միլիոն զբոսաշրջիկ, որոնք 25 միլիարդ դոլարի եկամուտ կապահովեն երկրին:

Մեծ զարգացում են ապրելու 100.000 եւ ավելի բնակչություն ունեցող քաղաքները: Ստամբուլը, որը 2023 թվականին ունենալու է 17 միլիոն բնակչություն, տեղ է զբաղեցնելու աշխարհի 10 ֆինանսական կենտրոնների շարքում, նրա եվրոպական ու ասիական հատվածներում կառուցվելու են նոր «քաղաքներ»: Իզմիրը դառնալու է աշխարհի 10 խոշորագույն նավահանգիստներից մեկը: Անկարայի կենտրոնը «Էսենբողա» օդանավակայանին կապվելու է երկաթգծով. առաջիկա երկու տարիներին նրա մետրոպոլիտենի համար կառուցվելու է 44 կիլոմետր երկաթգիծ:

Ստամբուլի մեջտեղով հեղուկանավերի եւ խոշոր առևտրանավերի անցմանը վերջ տալու նպատակով ԱԶԿ-ն առաջ է քաշել նրա եվրոպական հատվածում «Ստամբուլյան ջրանցքի» կառուցման նախագիծը, որը միմյանց է կապելու Մեւ եւ Մարմարա ծովերը: Այն ունենալու է 40 կիլոմետր երկարություն, 150 մետր լայնություն եւ 25 մետր խորություն եւ նախատեսված է լինելու ժամանակակից խոշոր նավերի (300 մետր) անցման համար:

Ի դեպ, հունական կողմը խիստ դժգոհությամբ ընդունեց այս լուրը՝ ԹՀ-ին մեղադրելով սեւծովյան նեղուցներով նավարկությունը կանոնակարգող 1936 թվականի Մոնտրեի կոնվենցիայով ստանձնած պարտավորություններից ձերբազատվելու փորձի մեջ: Բացի այդ, հունական կողմը նշեց, որ դրանով ԹՀ-ն ցանկանում է միայնակ վերահսկել ռուսական ու միջինասիական նավթի փոխադրումը դեպի Էգեյան ծով: Չպետք է մոռանալ, որ նեղուցներն ունեն միջազգային ջրերի կարգավիճակ, իսկ ահա «Ստամբուլյան ջրանցքը»² գտնվելու է բացառապես Թուրքիայի իրավասության ներքո:

Արտաքին. Նախ նշվում է, որ ԱԶԿ-ի իշխանության տարիներին Թուրքիան կարգավորել է իր հարաբերությունները գրեթե բոլոր հարեւանների հետ, ակտիվ դիրքորոշում է ցուցաբերել միջազգային ասպարեզում (միջնորդական ու խաղաղապահ), աջակցել է քաղաքակրթությունների (Արեւմուտք եւ Արեւելք) երկխոսությանը, ավելացել է այն երկրների թիվը, որոնց հետ վերացվել կամ մեղմացվել է անցագրային ռեժիմը, հաջող գործունեություն է ծավալել ՄԱԿ ԱԽ ժամանակավոր անդամի կարգավիճակում, որի թեկնածության դերում ԹՀ-ն նորից կներկայանա 2015–2016 թվականներին:

Նշվում է, որ ԹՀ-ն շարունակելու է ԵՄ-ին լիիրավ անդամակցությանն ուղղված ռազմավարական քայլերը: ԵՄ-ին լիիրավ անդամակցությունն Անկարային հնարավորություն կընձեռի ավելացնելու սեփական ազդեցությունը տարածաշրջանային եւ գլոբալ խնդիրների հարթման ժամանակ:

ԱԶԿ-ն շարունակելու է Արտասահմանաբնակ թուրքերի գերատեսչության միջոցով աջակցել եվրոպական երկրներում բնակվող թուրքերին ու նրանց ազգակից ժողովուրդներին: ԱԶԿ-ն հանդես է գալու նրանց ինտեգրման եւ ոչ թե ձուլման օգտին:

ԹՀ-ն շարունակելու է ԱՄՆ-ի հետ քաղաքական ինտենսիվ երկխոսությունը, որն առնչվում է նաեւ Իրաքին, Աֆղանստանին, արաբական աշխարհի զարգացումներին, մերձավորարեւելյան խաղաղ գործընթացին, Կովկասում ու Բալկաններում կայունությանն աջակցելուն:

ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության համակ ուշադրության կենտրոնում են գտնվելու Կիպրոսը, Մերձավոր Արեւելքը, թյուրքական երկրները, Աֆրիկան, Արեւելյան ու Հարավարեւելյան Ասիան, Լատինական Ամերիկան եւ վերջապես Ռուսաստանն ու Կովկասը: Ռուս-թուրքական հարաբերությունների զարգացումը նոր հնարավորություններ է ընձեռում Կովկասում, Միջին Ասիայում եւ այլ շրջաններում ռուս-թուրքական նոր համագործակցության համար: Ղարաբաղյան հակամարտության կար-

գավորման հարցում ԱԶԿ-ն շարունակելու է աջակցել ադրբեջանական տարածքների «օկուպացման» վերացմանը եւ խնդրի բանակցային ճանապարհով կարգավորմանը:

Փաստորեն, ԱԶԿ-ի այս լայնամասշտաբ արտաքին քաղաքականությունը ենթադրում է համարժեք քաղաքական կամք, տնտեսական ու քաղաքական ռեսուրսների առկայություն, ինչպես նաեւ ներքաղաքական խնդիրների բացակայություն:

Ինչ վերաբերում է ԺՀԿ-ին, ապա այն շեշտը դրեց քրդական գործոնի վրա: ԺՀԿ-ն հրապարակեց «Արեւելյան ու Հարավարեւելյան Անատոլիայի զարգացման» նախագիծը, որում քրդերին խոստանում էր. ա) քրդաբնակ արեւելյան ու հարավարեւելյան շրջանների նկատմամբ ճնշումների վերացում եւ համընդհանուր խաղաղության հաստատում, բ) «Քրդական հարցի» բացառապես ժողովրդավարական կարգավորում, գ) նախընտրական 10 տոկոսանոց արգելքի նվազեցում, դ) չլուծված խնդիրների եւ անհետ կորածների վերաբերյալ հանձնաժողովների ստեղծում, մեղավորների պատժում, ե) ԵՄ-ի պահանջով տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխում, զ) հատուկ լիազորություններ ունեցող դատարանների վերացում, է) 1980 թվականի սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջման մեղավորների պատժում, ը) որպես համընդհանուր խաղաղության օրինակ՝ Դիարբեքիրի բանտի վերածում թանգարանի, թ) «Գյուղական պահապանների» համակարգի վերացում, ժ) մայրենի լեզվով ուսուցման թույլտվություն, մշակութային ծուլման վերացում, մշակութային արժեքների նկատմամբ հարգանքի ցուցաբերում, ժա) մինչեւ 2023 թվականը քրդաբնակ շրջաններում 9.5 տոկոսանոց տնտեսական աճի արձանագրում, 365 միլիարդ դոլարի ներդրում: Սակայն, հազիվ թե քրդերը հավատան իրենց դահիճ Աթաթուրքի ավանդույթները պաշտպանող եւ ներկայացնող ԺՀԿ-ին:

Իսկ ահա ԱՇԿ-ի ծրագրի հիմքում ընկած է բնակչության շրջանում ազգայնական հայացքների վերհանումը, ինչի համար խիստ քննադատության է ենթարկվում իշխող ԱԶԿ-ն, որի «ղեկավարման պատճառով» ԹՀ-ի տարածքային ամբողջականությունը «հայտնվել է վտանգի տակ»:

Մայիսի 5-ին թուրքական «Միլլիյեթ» թերթը հրապարակեց այս տարի ԹՀ-ում տարբեր հետազոտական կենտրոնների (Konsensus, Metropoll, Andy-Ar, USADEM, ANAR, GENAR, MARMARA, Trend, ORC, IKSara) անցկացրած 34 հարցախույզների արդյունքներից կազմված միջին ցուցանիշները: Դրանց համաձայն՝ ԱԶԿ-ն ստացել է քվեների 46.95%-ը, ԺՀԿ-ն՝ 26.55%-ը, ԱՇԿ-ն՝ 11.85%-ը, ԽԺԿ-ն՝ 5.81%-ը, մնացածը՝ 8.84%-ը: Ի դեպ, ապրիլի 13-27-ը Թուրքիայի 81 նահանգներից

60-ում անցկացրած հարցախույզի արդյունքներով՝ GENAR հետազոտական կենտրոնը սահմանել էր այն առավելագույն նշածողը, որը կուսակցությունները կարող են գրանցել ընտրությունների ժամանակ. ԱԶԿ՝ 57.6%, ԺՀԿ՝ 36.7%, ԱՇԿ՝ 28.3%, ԽԺԿ՝ 9.6%:

Ուշագրավն այն է, որ ընտրություններից առաջ ԱԶԿ-ն փորձեց որոշակիորեն ազդել անգամ այս հարաբերակցության վրա եւ հարվածներ հասցնել իր մրցակիցներին: Փետրվարին շուկայում հայտնվեց «Դերսիմցի հայ Եմուշ խանուսի որդի ինժեներ Քեմալը» խորագրով գիրքը, որում պատմվում էր ԺՀԿ նախագահ Քեմալ Քըլըչդարոլուի հայկական արմատների մասին (մորական կողմից): Միանգամից աչքի է զարնում գրքի տպաքանակը՝ 100.000 օրինակ: ԺՀԿ-ն գիրքը որակեց որպես պատվիրված՝ չնշելով, թե ով է պատվիրել այն. բավական ակնհայտ է, թե ով էր շահագրգռված խորհրդարանական ընտրությունների նախաշեմին այդպիսի գրքի ի հայտ գալով, որն արագորեն տարածվեց նաեւ թուրքական խորհրդարանում:

Ապրիլի 28-ին հայտնի դարձավ, որ ԱՇԿ փոխնախագահների պաշտոնից հրաժարական են տվել եւ իրենց թեկնածությունը ստիպված են եղել հանելու Ռեջաի Յըլդըրըմը եւ Մեթին Չոբանօղլուն: Ընդ որում, ԱՇԿ-ն նրանցից առաջինի թեկնածությունն առաջադրել էր Ադանայում, իսկ երկրորդինը՝ Քըրշեհիրում: Թուրքական լրատվամիջոցները սա որակեցին որպես «երկրաշարժ»: ԱՇԿ փոխնախագահները ստիպված եղան այդ քայլին գնալու, քանի որ ինտերնետում, չզիտես որտեղից, հայտնվեցին նրանց ինտիմ կյանքի լուսանկարներն ու տեսանյութերը³: Թաքնված տեսախցիկի օգնությամբ նկարահանված այդ կադրերում երեւում են, թե ինչպես են թուրք ազգայնականները թեթեւ վարքի տեր կանանց հետ զրուցում քաղաքականության, խորհրդարանական ընտրությունների եւ սեռական հարցերի շուրջ:

Մայիսի 7-ին հայտնվեց եւս մեկ «սեռական» տեսագրություն: Այս անգամ դրա զոհը դարձան Ստամբուլի նահանգի ԱՇԿ նախկին նախագահ Իհսան Բարուքչուն եւ ԱՇԿ կազմակերպչական հարցերով փոխնախագահ Բյուլենթ Դիդինմեզը: ԱՇԿ-ն նրանց թեկնածությունն առաջադրել էր Ստամբուլում: Այս ամենը, հիրավի, կարող է կործանարար հետեւանքներ ունենալ ԱՇԿ-ի համար, որը, հարցախույզների համաձայն, թուրքական խորհրդարանում գոյատեւման պայքար է մղելու: ԱՇԿ նախագահ Դեւլեթ Բահչելին տեղի ունեցածի համար անմիջապես մեղադրեց ԱԶԿ-ին (էրդողանին), որի զինանոցում, թուրքական լրատվամիջոցների հաղորդմամբ, առկա է եւս 8 մմանատիպ տեսագրություն:

Ապրիլի 18-ին YSK-ն վետո դրեց ԽԺԿ 7 անկախ թեկնածուների (Լեյլա Ձանա, Գյուլթան Քըշանաք, Հաթիփ Դիշլե եւ այլք) վրա՝ դա պատճառաբանելով նախկինում նրանց դատված լինելով: Դրանից հետո ԽԺԿ-ն սպառնաց բոյկոտել խորհրդարանական ընտրությունները, ապա քրդերը զանգվածաբար ոտքի ելան եւ քառասային իրավիճակ առաջացրին Թուրքիայի տարբեր շրջաններում: Ապրիլի 19–29-ին տեղի ունեցած բողոքի ակցիաների արդյունքում զոհվեց 2 մարդ, ձերբակալվեց 880-ը, որոնցից կալանվեց 120-ը: Այս ամենն առաջացրեց ԱԶԿ վերնախավի խոր նտահոգությունը, քանի որ սեփական վարկանիշը հայտնվել էր մեծ վտանգի տակ: Արդյունքում՝ YSK-ն հետքայլ կատարեց եւ նրանց թույլատրեց մասնակցել խորհրդարանական ընտրություններին, որով եւ հարուցեց թուրք ազգայնականների դժգոհությունը: Փաստորեն, զուր չէր, որ ԺՀԿ նախագահ Քեմալ Քըլըչդարոզլուն մինչ այդ Էրդողանին կնքել էր «երկրի գլխավոր դատախազ» մականվամբ՝ նկատի ունենալով «Բալյոզ» ռազմական հեղաշրջման եւ «Էրգենեքոն» ահաբեկչական կազմակերպության դատավարությունների ընթացքը:

Հետաքրքիր է, որ ընտրություններից առաջ «հարված» ստացավ նաեւ ԱԶԿ-ն: Մայիսի 4-ին սեւեռվյան Քասթամոնուից Անկարա վերադարձող Էրդողանի ավտոշարասյունը ենթարկվեց զինված հարձակման, ինչի արդյունքում զոհվեց եւ վիրավորվեց մեկական ոստիկան: Սակայն Էրդողանը չէր գտնվել դրա մեջ, քանի որ նախապես ուղղաթիռով Քասթամոնուից մեկնել էր Ամասիա: Սա ծանոթ ձեռագիր էր, եւ ինչպես նախկինում դիպուկ նկատել է թուրքական ընդդիմության նախկին առաջնորդ Դեմիզ Բայքալը, Էրդողանի դեմ նմանատիպ «մահափորձերը» միտված են նրա վարկանիշի բարձրացմանը:

Այսպիսով, բոլոր կանխատեսումներով՝ առաջիկա ընտրություններում հաղթանակ է տանելու ԱԶԿ-ն, ինչը կլինի նրա երրորդ անընդմեջ հաղթանակը: ԱԶԿ-ն պայքարելու է 550 հոգանոց մեջլիսում առնվազն 367 մանդատ (2/3) ստանալու համար, ինչը հնարավորություն կընձեռի խորհրդարանում անցկացնելու ցանկացած օրինագիծ: Դրա համար անհրաժեշտ է, որ ԱԶԿ-ն ստանա քվեների մոտ 50%-ը:

ԺՀԿ-ն փորձելու է ստանալ քվեների նվազագույնը 25%-ը՝ դրանով իսկ բարելավելով իր նախորդ ցուցանիշը: ԱՇԿ-ն այս ընթացքում իրեն վարկաբեկել է եւ այս անգամ պայքարելու է թուրքական խորհրդարանում գոյատևման համար:

Իսկ ԽԺԿ-ն իր շուրջ 60 անկախ թեկնածուների միջոցով պայքարելու է 81 նահանգներից միայն 39-ում եւ մտադիր է խորհրդարանում մեծացնել սեփական ներկայացուցչությունը՝ դա հասցնելով 35-40 մանդատի

(2007 թվականին եւս քրդերը հանդես եկան անկախ թեկնածուներով, ինչը հանգեցրեց նրան, որ երկրի արեւելյան ու հարավարեւելյան շրջաններում, ուր գլխավորապես ապրում են քրդեր, նրանք հասան նշանակալից հաջողության՝ խորհրդարանում ձեռք բերելով 21 մանդատ):

¹ 2010 թվականին ԹՀ տնտեսությունը 8.9% աճ է արձանագրել, ինչն աննախադեպ իրադարձություն էր նրա ավելի քան 87-ամյա պատմության ընթացքում: Այդ ցուցանիշով ԹՀ-ն Եվրոպայում զբաղեցրել է 1-ին տեղը, իսկ աշխարհում՝ 3-րդ տեղը (Չինաստան՝ 10.3% ու Արգենտինա՝ 9.2%): Մայիսի 6-ին բրիտանական The Economist պարբերականը գրեց, որ ԱԶԿ-ի հենց տնտեսական ղեկավարման ունակությունն է հանդիսանում առաջիկա խորհրդարանական ընտրություններում նրա հաղթանակի գլխավոր գրավականը:

² Մինչ այդ էլ նշվում էր, որ Երդողանը երազում է մինչեւ 2023 թվականը կառուցել «թուրքական Սուեզի ջրանցքը», որը սեւծովյան Սամսունից ձգվելու է մինչեւ միջերկրածովյան Յոււմուրթալըք (գրեթե նույն երթուղին, ինչ «Սամսուն-Ջեյհան» նավթամուղը): Անատոլիայի մեջտեղով անցնելիք այս ջրանցքն ունենալու է մոտ 500 կիլոմետր երկարություն, 80 մետր լայնություն, 22 մետր խորություն եւ նախատեսված է լինելու միջին մեծության նավերի համար:

³ Հետաքրքիր է, որ գրեթե մեկ տարի առաջ՝ 2010 թվականի մայիսի 10-ին, նույն պատճառով ստիպված էր եղել հրաժարական տալ ԺՀԿ նախկին նախագահ եւ թուրքական ընդդիմության նախկին առաջնորդ Դենիզ Բայթալը: Դրանից օրեր առաջ թուրքական «Վաքիթ» թերթի համացանցային տարբերակում հեռարձակվել էր Դենիզ Բայթալի եւ նույն կուսակցության անդամ, կին պատգամավոր Նեսրին Բայթոքի միջեւ սեռական հարաբերությունների տեսագրությունը, որը դարձյալ նկարահանվել էր թաքնված տեսախցիկի միջոցով: Այն ժամանակ Բայթալը հայտարարել էր, որ այդպիսի դավադրությունն անհնար կլիներ իրագործել առանց իշխանական ջանքերի:

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԱՐԱՐԱԿԱՆ ՋԱՐԹՈՆՔՆԵՐ

Յենրի Բերքի

Թուրքիայի համար արաբական աշխարհում բռնկված հուզումներն անակնկալ էին: Պաշտոնական Անկարան իրականացնում է հարեւանների հետ «զրո խնդիրների» քաղաքականություն, սակայն այդ քաղաքականությունն ավելի շատ ենթադրում է «զրո խնդիրների» առկայություն իշխող վարչակարգերի, այլ ոչ թե տվյալ պետության բնակչության հետ հարաբերություններում:

Դա է պատճառը, որ Թունիսում ապստամբության բռնկումից հետո թուրքական իշխանություններն սկզբում լռություն պահպանեցին: Եգիպտոսում ցույցերի մեկնարկին պաշտոնական Անկարան եւս խուսափում էր կոնկրետ արձագանքից: Սակայն զգալով, որ նախագահ Մուբարաքն ամենայն հավանականությամբ հրաժարական է տալու, եւ նախագահ Օբաման էլ հակված է Մուբարաքի հեռանալու տարբերակին, վարչապետ Էրդողանը պաշտոնապես կոչ արեց Մուբարաքին հրաժարական տալ: Յարկ է նշել, որ Էրդողանի այդ հայտարարությունը պայմանավորված էր նաեւ Թուրքիայի եւ Եգիպտոսի միջեւ առկա հակասություններով: Եգիպտոսի իշխանությունները մտահոգված էին Էրդողանի՝ արաբական աշխարհում աստիճանաբար աճող ժողովրդականությունից եւ Թուրքիայի փորձերից՝ միջամտել այնպիսի խնդիրների կարգավորմանը, որոնք Եգիպտոսն իր մենաշնորհն էր համարում: Դրանց թվում կարելի է հիշատակել Գազայի հիմնախնդիրը եւ «Յամասի» ու պաղեստինյան իշխանությունների միջեւ հարաբերությունների կարգավորումը:

Մերձավոր Արեւելքում Թուրքիայի իրականացրած քաղաքականության վերլուծության համար կարելոր է հաշվի առնել նաեւ տնտեսական գործոնը: Սեփական տնտեսական շահերը եւ տարածաշրջանի գրեթե բոլոր վարչակարգերի հետ սերտ կապերը ստիպում են Թուրքիային ընդդիմանալ Մերձավոր Արեւելքում որեւէ արմատական փոփոխության:

Այս առումով Լիբիայում ընթացող քաղաքացիական պատերազմը լուրջ խնդիր է Թուրքիայի համար: Ռազմական գործողությունների մեկնարկին Լիբիայում շուրջ 25.000 թուրք բանվորներ էին աշխատում, թուրքական ընկերությունները միլիարդավոր դոլարների պայմանագրեր ունեին Լիբիական գործընկերների հետ: Պատահական չէ, որ 2010թ. դեկտեմբերին Էրդողանն ստացավ Քադաֆիի անվան մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մրցանակը: Լիբիայում տնտեսական

ներգրավածությունը եւ Քաղաֆիի հեռանալու պարագայում սպասվող անորոշությունը հարկադրեցին թուրքիային լիբիական ճգնաժամի սկզբում դեմ արտահայտվել ապստամբներին աջակցելուն ուղղված որեւէ ռազմական գործողության իրականացման: Թուրքիայի այս դիրքորոշման պատճառով ապստամբների կենտրոն Բենգազիում տեղի ունեցան հակաթուրքական ցույցեր, ապստամբները փորձեցին գրոհել թուրքական հյուպատոսությունը:

Հակաթուրքական տրամադրությունների աճը հարկադրեց թուրքիային փոխել դիրքորոշումը: Չնայած սկզբնական առարկություններին, թուրքիան ի վերջո համաձայնվեց, որ ՆԱՏՕ-ն ստանձնի Լիբիայում ընթացող գործողության ղեկավարումը: Միաժամանակ թուրքիան սահմանափակ մասնակցություն ունի Քաղաֆիի բանկային հաշիվների սառեցման հարցում:

Փորձելով վերականգնել թուրքիայի հեղինակությունը Լիբիայում՝ Էրդողանն առաջ քաշեց լիբիական ճգնաժամի կարգավորման երեք կետից բաղկացած ծրագիր, որը ենթադրում է հունանիտար միջանցքների տրամադրում, զինադադարի հաստատում եւ բանակցությունների անցկացում:

Լիբիական ճգնաժամը լուրջ մարտահրավեր է Մերձավոր Արեւելքում թուրքիայի քաղաքականությանը: Էրդողանը զգալի ժողովրդականություն է վայելում արաբական երկրներում՝ հիմնականում Իսրայելի հետ հակամարտության պատճառով: Սակայն ներկայումս բոլոր հարեւանների հետ դրական հարաբերություններ պահպանելու թուրքիայի ձգտումը լուրջ խնդիրների առջև է կանգնած:

Շատ ավելի բարդ իրավիճակ է ստեղծվել թուրքիայի համար Սիրիայի խնդրում: Էրդողանի կառավարությունը զգալի ջանքեր է գործադրել Սիրիայի հետ հարաբերությունները կարգավորելու համար: Հարաբերությունների սերտացման ներկա տենպերի պահպանման դեպքում առավելագույնը տասնհինգ տարի անց թուրքիան Սիրիայի տնտեսությունում տիրապետող դիրքեր կգրավի: Ինչպես մյուս պետությունների պարագայում, այստեղ եւս թուրքիայի ջանքերն ուղղված էին նախեսառաջ Ասադի վարչակարգի հետ սերտ հարաբերությունների հաստատմանը: Սիրիայում ժողովրդական հուզումների ծավալմանը զուգընթաց թուրքիան փորձում է ճշգրտել սեփական դիրքորոշումը: Պաշտոնական Անկարային ձեռնտու չէ Ասադի վարչակարգի տապալումը: Միեւնույն ժամանակ, ի տարբերություն Իրանի, թուրքիան փորձում է հանդգնել Ասադին՝ բարեփոխումներ իրականացնել Սիրիայում: Այդ նպատակով Դամասկոս այցելեցին թուրքիայի արտգործնախարարը եւ թուրքական հետախուզության ղեկավարը:

Իրադրությունը Սիրիայում բարդանում է նաեւ կրոնական հակասությունների պատճառով: Սիրիայի բնակչության մեծամասնությունը սուննի մահմեդականներ են, իսկ երկրում իշխանությունը գտնվում է ալավիների ձեռքում: Ժողովրդավարական բարեփոխումների պահանջով սկիզբ առած հուզումներն աստիճանաբար վերածվում են միջկրոնական ընդհարումների, ինչն ավելի է դժվարացնում Սիրիայում իրավիճակի կարգավորմանն ուղղված թուրքական ջանքերը: Իրավիճակի հետագա սրման դեպքում հազարավոր սիրիացիներ կարող են ապաստան փնտրել Թուրքիայում, եւ այս հանգամանքը Թուրքիայի համար հավելյալ մտահոգության աղբյուր է:

Արաբական երկրներում ծավալված ժողովրդական հուզումները մի շարք վերլուծաբանների հիմք են տալիս ենթադրելու, որ Թուրքիան կարող է որպես մոդել դիտարկվել կերպափոխումների ենթարկվող արաբական պետությունների համար: Ինչպես նշել է Էրդողանը, Թուրքիան ոգեշնչման աղբյուր է արաբական հասարակությունների համար: Արդարություն եւ զարգացում կուսակցությունը, որը մեծ ժողովրդականություն է վայելում արաբական հասարակություններում, կարողացել է զգալիորեն սահմանափակել զինվորականների ազդեցությունը երկրի քաղաքական կյանքում, եւ այս հանգամանքը Թուրքիային հավելյալ հեղինակություն է հաղորդում տարածաշրջանում: Տարածաշրջանում Թուրքիայի հեղինակության աճին նպաստում են նաեւ նրա տնտեսական հզորությունը, իսլամի եւ արեւմտյան ժողովրդավարական արժեքների հաջող միահյուսման փորձը, զինվորական վերնախավի կողմից քաղաքականությանը միջամտելուն ուղղված քայլերի կանխումը, ինչպես նաեւ՝ Իսրայելի հասցեին պարբերաբար հնչեցվող քննադատությունը: Այդուհանդերձ, արաբական պետություններին շատ դժվար կլինի կրկնօրինակել թուրքական փորձը:

Երկարաժամկետ հեռանկարում Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում կշարունակի ավելանալ, սակայն կարճաժամկետ հեռանկարում Թուրքիային բավականին լարված ժամանակաշրջան է սպասվում: Թուրքիայի համար բավականին անսպասելի էին Լիբիայում հակաթուրքական ցույցերը, որոնց մասին տեղեկատվությունն արագորեն տարածվեց ողջ տարածաշրջանում՝ վնասելով Թուրքիայի հեղինակությանը:

Թուրքիայի համար հիմնական դժվարությունն այն է, որ այդ պետությունը, չնայած հանդես է գալիս փոփոխությունների օգտին, սակայն միաժամանակ ելնելով իր տնտեսական շահերից, հարկադրված է աջակցել գործող վարչակարգերին, որոնք երաշխավորում են թուրքական ընկերությունների կողմից կատարված ներդրումների անվտանգությունը: Այդ առումով Թուրքիան որոշակիորեն նմանվել է ԱՄՆ-ին, որը

նույնպես աջակցում է ժողովրդավարական բարեփոխումներին եւ միաժամանակ փորձում է չկորցնել սեփական ազդեցությունը՝ պահպանելով կապերը ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերություններ ունեցող վարչակարգերի հետ:

Արաբական աշխարհում տեղի ունեցող իրադարձությունները որոշակի ազդեցություն կարող են թողնել նաեւ Թուրքիայի ներքաղաքական իրավիճակի վրա՝ հաշվի առնելով նաեւ հունիսին նախատեսված խորհրդարանական ընտրությունները: Հարկ է նշել, որ եթե անկանխատեսելի իրադարձություններ տեղի չունենան, ամենայն հավանակա՜նությամբ, Արդարություն եւ զարգացում կուսակցությունը վստահ հաղթանակ կտանի առաջիկա ընտրություններում: Թուրքիայի համար շատ ավելի վտանգավոր է քրդական խնդիրը: Երդողանն արդեն հայտարարել է ընտրություններից հետո նոր սահմանադրություն ընդունելու մտադրության մասին, որը հնարավորություն կտա լուծում տալ քրդերին առավել շատ անհանգստացնող մի շարք խնդիրների: Թուրքիայում քրդական շարժման առաջնորդները պնդում են, որ ընտրությունների ավարտից անմիջապես հետո անհրաժեշտ է ձեռնամուխ լինել քրդերի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերի իրականացմանը: Սակայն թուրքական հասարակությունում այս հարցի վերաբերյալ համաձայնությունը բացակայում է: Քրդերի իրավունքների պաշտպանությանն ուղղված կոնկրետ քայլերի բացակայության պարագայում վերջիններս կարող են դիմել բողոքի ոչ բռնի գործողությունների՝ կրկնօրինակելով Եգիպտոսում եւ արաբական այլ երկրներում ծավալված շարժումների փորձը, ինչը լուրջ մարտահրավեր կլինի Երդողանի կառավարության համար:

Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում կարող է օգտակար լինել Արեւմուտքի եւ առաջին հերթին ԱՄՆ-ի համար: Սակայն իրադարձությունների նման զարգացման համար Թուրքիան պետք է ընդունի Արեւմուտքի հետ սեփական շահերի ընդհանրությունները եւ Թուրքիա–Արեւմուտք համագործակցության շահավետությունը: Հակառակ պարագայում արաբական աշխարհի զարգացումները կարող են բացասական ազդեցություն ունենալ տարածաշրջանում ինչպես Թուրքիայի, այնպես էլ Արեւմուտքի շահերի համար:

**Carnegie Endowment
for International Peace**

Ապրիլ, 2011

Անգլերենից թարգմանեց

Քենիամին Պողոսյանը

(տպագրվում է որոշ կրճատումներով)

ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ

Սեւակ Սարուխանյան

Ներքաղաքական զարգացումներն Իրանում զգալիորեն ակտիվացել են: Երկրի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեյի եւ նախագահ Մահմուդ Ահմադինեժադի միջեւ տարածայնությունները դուրս են եկել հասարակության համար տեսանելի դաշտ:

Իրանի հոգեւոր առաջնորդի եւ նախագահի միջեւ առկա հակասությունները նոր չեն. վերջին մի քանի տարիների ընթացքում դրանց մասին բավական շատ է գրվել եւ խոսվել, սակայն միայն 2011թ. ապրիլ–մայիս ամիսներին հակասությունները խորացան այնքան, որ հանգեցրին հարաբերությունների կտրուկ սրման: Նման զարգացման համար առիթ հանդիսացավ այն, որ Իրանի նախագահը ապրիլի 17-ին պաշտոնից հեռացրեց իսլամական հանրապետության տեղեկատվության (անվտանգության) նախարար Յեյդար Մոսլեհիին: Պաշտոնանկության համար հիմք հանդիսացան նախարարի անթաքույց բողոքը եւ հակազդեցությունը նախագահ Ահմադինեժադի եւ նրա աշխատակազմի ղեկավար Էսֆանդիյար Մաշայիի կողմից տեղեկատվության նախարարության աշխատանքների հանդեպ տոտալ վերահսկողություն հաստատելու փորձերին:

Համաձայն նախարարության բարեփոխումների նախագծի, որը ներկայացվել էր Է.Մաշայիի կողմից, նախարարի ենթակայությունից դուրս պետք է բերվեր բյուջետավորման եւ պլանավորման վարչությունը, որն անցնելու էր նախագահի անմիջական վերահսկողության տակ: Սա կնշանակեր, որ նախագահը եւ նրա աշխատակազմը լիարժեքորեն կսկսեին վերահսկել այն բոլոր գործառույթները, որոնցով զբաղվում է նախարարությունը, որի ղեկավարը, որպես կանոն, մշտապես հաշվետու է եղել Իրանի հոգեւոր առաջնորդին եւ երբեք չի գտնվել ուղղակիորեն նախագահի ենթակայության տակ: Արդյունքում՝ կարող էր ստացվել մի իրավիճակ, երբ, ինչպես իրանական կայքերից մեկն էր մեջբերել Յեյդար Մոսլեհիի խոսքերը. «ամեն անգամ մենք պետք է նախագահից հարցնենք՝ զբաղվե՞նք մեր պետության անվտանգության այս հարցով, թե՞ չզբաղվենք: Սա մեզ համար անթույլատրելի է»:

Նշենք, որ տեղեկատվության նախարարությունը, որն Իրանում կատարում է ազգային անվտանգության նախարարության գործառույթները, ներքին եւ արտաքին անվտանգության ոլորտում գործում է

Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսից բուրոսիս անկախ, որտեղից եւ սկսվել է ներկայիս նախագահի քաղաքական ակտիվ կարիերան: Այս երկու կառույցները հաճախ են բախվել միմյանց շահերի սահմանազատման հարցերի շուրջ. Պահապանների կորպուսն իր տարբեր գործառույթներով փորձել է փոխարինել տեղեկատվության նախարարությանը՝ ջանալով վերահսկողություն հաստատել ներքին եւ արտաքին հետախուզության ոլորտների նկատմամբ:

Նախագահ Ահմադինեժադի կողմից իրականացվող բարեփոխումների ծրագիրը կարող էր անմիջականորեն գլխատել տեղեկատվության նախարարությունը եւ փոխել Իրանի ազգային անվտանգության ապահովման ոլորտում իսլամական հեղափոխությունից հետո տարբեր կառույցների գործունեության միջեւ ձեւավորված հավասարակշռությունը: Սա էլ հենց առաջացրել էր Յեյդար Մոսլեհիի զայրույթը եւ հանգեցրել նրա հրաժարականին: Ալի Խամենեյի կողմից վերջինիս վերականգնումը տեղեկատվության նախարարի պաշտոնում ցույց տվեց, որ նախագահի փորձերին դեմ է նաեւ երկրի հոգեւոր առաջնորդը:

Արդյունքում՝ ապրիլի 22-ից մինչեւ մայիսի 1-ը Իրանի նախագահը փակվեց իր տանը՝ չներկայանալով կառավարության նիստերին եւ Ղոնում հոգեւոր առաջնորդի հետ հանդիպմանը: Մայիսի 1-ին Մ.Ահմադինեժադն ընդունեց իր «հոգեւոր խորհրդական» եւ մեջլիսի պատգամավոր Մոհտեզա Աղա-Թեհրանիին ու մի շարք պատգամավորների, որոնց, ըստ Աղա-Թեհրանիի, նախագահն ասել է. «Ռահբարն ինձ ժամանակ է տվել, պետք է կամ ընդունեմ վերանշանակումը (Մոսլեհիի–Մ.Ս.), կամ հրաժարական տամ»: Նույն օրը նախագահը հաղորդագրություն ուղարկեց, որում նշեց, որ հոգեւոր իշխանությունների որոշումները պարտադիր են իր եւ պետական բոլոր այրերի համար: Մայիսի 2-ին նախագահն արդեն ներկայացավ կառավարության նիստին, որին չներկայացավ կրկին իր պաշտոնին նշանակված տեղեկատվության նախարար Մոսլեհին: Կառավարության հաջորդ նիստին Մոսլեհին արդեն ներկա էր, ինչը նշանակում է, որ նախագահն ընդունել եւ կատարում է երկրի հոգեւոր առաջնորդի պահանջը: Սակայն սրանով քաղաքական ճգնաժամն Իրանում ավարտված չի կարելի համարել, ինչը պայմանավորված է մի քանի հանգամանքով:

Առաջին. ինչպես Ահմադինեժադի բացակայության օրերին, այնպես էլ դրանից հետո Ալի Խամենեյին անցել է երկրի կառավարման հարցերին ամենօրյա մասնակցությանը: Վերջին շաբաթներին նա գրեթե ամեն օր հանդիպումներ է ունենում, հանդես գալիս հայտարարություններով ներքին եւ արտաքին քաղաքական ու տնտեսական հարցերի վերաբեր-

յալ: Սա կարող է խոսել այն մասին, որ նա պատրաստվում է Ահմադի-նեժադի հնարավոր պաշտոնանկությանը եւ պետության ընթացիկ կառավարման ստանձնմանը:

Երկրորդ. չնայած նախագահին իր մանլո հաղորդագրությամբ մեղա-յականով է հանդես եկել, նրա իմփիչմենթի հարցն Իրանի խորհրդա-րանում նախնական քննարկման փուլում է գտնվում: Նախատեսվում է Մ.Ահմադինեժադին հարցաքննության կանչել խորհրդարան, որից հետո կարող է օրակարգում դրվել նրա պաշտոնանկության հարցը: Նման հարցաքննության պահանջագրի տակ արդեն ստորագրել է 90 պատգա-մավոր, որոնց մեծ մասը ներկայացնում է ծայրահեղ պահպանողական-ների ճամբարը, ինչը խոսում է այն մասին, որ նման նախաձեռնությունը, հավանաբար, եկել է Ղոմից: Հատկանշական է, որ թեև Ահմադինեժադը տեղեկատվության նախարարին աշխատանքից հեռացրել էր *ապրիլի 17-ին*, մեջլիսում շրջանառվող պահանջագրի տակ առաջին ստորա-գրությունները դրվել են *ապրիլի 3-ին*, այսինքն՝ Ահմադինեժադի ու Խամենեյի հարաբերությունների սրումից 2 շաբաթ առաջ, ինչն իր հերթին խոսում է այն մասին, որ տեղեկատվության նախարարի պաշտո-նանկությունը զուտ առիթ էր Ահմադինեժադի նախագահության դեմ գործողությունների ծավալման համար:

Երրորդ. այսօր Ահմադինեժադի դեմ սկսել են հանդես գալ նաև նրան նախկինում պաշտպանածները: Իսկ նրա հոգեւոր հայր այաթուլլա Յազդին անգամ հայտարարել է, որ *«ռահբարի կամքին հակառակ գնալը սրբապղծություն է եւ քայլ է ընդդեմ Աստծո»*:

Ակնհայտ է, որ նախագահի պաշտոնանկությունն այսօր Իրանում շատերին ավելի քան հնարավոր է թվում, եւ այդ պատճառով նման հե-ռանկարն իրականություն դարձնելու ուղղությամբ Իրանում առաջիկա ամիսներին աշխատելու են գրեթե բոլորը՝ ընդդիմությունից մինչև նախագահի դեմ տրամադրված պահպանողականները: Ընդ որում, մեղադրանքներն Ահմադինեժադի եւ նրա շրջապատի դեմ տարաբնույթ են: Մեջլիսի մի քանի անդամներ մեղադրեցին նախագահին արտաքին քաղաքական թուլականության մեջ, քանի որ նա, Բահրեյնի շիաներին աջակցելու փոխարեն, խոսում է «շիա–սուննի» համերաշխության մասին: Նույնպիսի մեղադրանքներով հանդես եկավ նաև Իրանի Ազգային անվտանգության բարձրագույն խորհրդի նախկին ղեկավար Հ.Ռուհանին:

Մայիսի սկզբից տեղեկատվության նախարարության աշխատակից-ները ձերբակալեցին նախագահի աշխատակազմի ղեկավար Մաշայիի անմիջական շրջապատի մարդկանց՝ ամենատարբեր մեղադրանքնե-րով: Մասնավորապես՝ նախագահ Ահմադինեժադին մոտ կանգնած

Աբաս Ղաֆարին մեղադրվեց մետաֆիզիկայով զբաղվելու եւ ջիների հետ կապերի մեջ: Չնայած մեղադրանքների անլուրջ լինելուն՝ հարկ է նշել, որ Մ.Ահմադինեժադի կրոնական հայացքները շատերն են չափից դուրս ծայրահեղ ու տարօրինակ անվանում: Մահդիի գալստյանն օրեցօր սպասելը նախագահի կողմից դարձել է Իրանում, այդ թվում նաեւ կրոնական գործիչների շրջանում ամենաքննարկվող թեմաներից մեկը: Ոմանք չեն վարանում նախագահի հայացքներն անգամ աղանդավորական անվանել, սակայն ակնհայտ է, որ այդ հայացքները չեն պատճառն այն արշավանքի, որը սկսվել է նրա դեմ: Հակաճախագահական կամպանիան Իրանում կարող է ունենալ մի քանի պատճառ, որոնցից նշենք հիմնական երկուսը:

Արաբական գործընթացների ազդեցությունը

Արաբական աշխարհում բարձրացած հեղափոխական ալիքը հասավ Իրան, բայց ժամանակավորապես ճնշվեց պետության կողմից: Սակայն ակնհայտ է, որ այդ ճնշումը միայն ժամանակավոր բնույթ է կրում, քանի որ հակաիշխանական շարժումն Իրանում 2012 թվականի սկզբին կայանալիք խորհրդարանական ընտրություններին նախորդող ամիսների ընթացքում նոր թափ է ստանալու: Պետք է հիշել, որ ակտիվ ընդդիմադիր շարժումն Իրանում ծնվեց 2009-ի նախագահական ընտրությունների ժամանակ եւ ուղղված էր հենց գործող նախագահի դեմ: Շարժման ձեւափոխումը հակաճախագահականից հակահամակարգայինի այսօր բավական ակտիվ է ընթանում, ինչը կարող է 2012-ին լուրջ հարված հասցնել թե՛ պետությանը եւ թե՛ իշխանությանը: Այս պարագայում, հարվածելով նախագահին, այդ թվում՝ նրան հրաժարականի պահանջ ներկայացնելով, երկրի պահպանողական ուժերն իրենց տարանջատում են նրանից՝ փորձելով հանդարտեցնել 2012-ին հնարավոր հակաիշխանական հեղափոխական շարժումը եւ խուսափել արաբական սցենարի կրկնումից: Տվյալ դեպքում, կարելի է ասել, որ աշխատում է «Մավրն արեց իր գործը, մավրը կարող է հեռանալ» սկզբունքը:

2013-ի հարցը

Չնայած մինչ 2013 թվականի նախագահական ընտրությունները դեռեւս 2 տարի կա, Իրանի պահպանողականները եւ հոգեւոր իշխանություններն այսօր պարտավոր են նվազագույնի հասցնել Մ.Ահմադինեժադի հնարավորություններն իրեն փոխարինող ընտրելու եւ ներկայացնելու հարցում: Մինչեւ այժմ Իրանի նախագահները նման

ընտրության հնարավորություն չեն ունեցել, սակայն գործող նախագահին իր նախորդներից որոշակի կարելուր հատկանիշներով տարբերվում է: Ի տարբերություն նախորդների՝ նա վայելում է իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի սպայական կազմի մեծ մասի աջակցությունը, ամուր կապեր ունի ժայրահեղ պահպանողական հոգեւորականության հետ, տնտեսական բարեփոխումների շնորհիվ հասել է խոշոր արդյունաբերության, նավթային եւ բանկային սեկտորների նկատմամբ լուրջ վերահսկողության հաստատման եւ փորձում էր «վերցնել» նաեւ տեղեկատվության նախարարությունը՝ իր ազդեցությունը երկրի կյանքում դարձնելով գրեթե բացարձակ:

Վերջին շրջանում Իրանում հաճախ էին քննարկում Ահմադինեժադի յուրային, ազգական եւ աշխատակազմի ղեկավար Մաշայիի՝ նախագահ դառնալու հավակնությունները: Եթե Ահմադինեժադի իշխանության աճն ընթանար նախկին տեմպերով, նման հեռանկարն իրականանալի կարող էր թվալ, թեեւ Մաշային չի վայելում հոգեւորականության աջակցությունը եւ ունի չափազանց աշխարհիկ, պրագմատիկ եւ նեղ տնտեսական շահեր հետապնդող գործչի համարում: Կզրկվի՞ Մ.Ահմադինեժադը պաշտոնից, թե՞ ոչ՝ այսօր դժվար է ասել, սակայն ակնհայտ է, որ Իրանի հաջորդ նախագահի անունն ընտրվելու է ոչ իր կողմից:

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔՐԴԵՐԸ

Արտաշես Տեր-Չարությունյան

Արաբական հեղափոխությունները եւ նրանցով պայմանավորված զարգացումները մի տեսակ հետին պլան էին մղել վերջին շրջանում մերձավորարեւելյան քաղաքականության մեջ կարեւոր դեր խաղացող մի շարք գործոններ: Սակայն հեղափոխությունների ալիքն արաբական աշխարհում կարծես թե թեքվում է դեպի մայրամուտ, եւ նշված գործոնները վերստին սկսում են զգացնել իրենց:

Քրդական հարցն այդ գործոններից մեկն է, ու չնայած Մերձավոր Արեւելքին վերաբերող միջազգային փորձագիտական դիտարկումներում դեռ շարունակում է գերակշռել արաբական հեղափոխությունների թեման, բայց արդեն ի հայտ են գալիս առաջին նշանները, որ առաջիկայում քրդական հարցը վերստին ձեռք է բերելու իր կշիռը մերձավորարեւելյան քաղաքական զարգացումներում: Ընդ որում, հարցը կարծես թե նոր իմաստ է ստանում տարածաշրջանային վերջին զարգացումների արդյունքում, մասնավորապես՝ Սիրիայում, Թուրքիայում եւ Իրաքում տիրող իրավիճակի ու սպասվող իրադարձությունների ֆոնին:

Սիրիայի անկայունացումը

Թեեւ սիրիական իշխանություններն անում են հնարավորն իրենց երկրում տեղի ունեցողի վերաբերյալ տեղեկատվության արտահոսքը կանխելու համար, սակայն մեզ հասնող պատկերն էլ բավարար է՝ կարծիք կազմելու այնտեղ ստեղծված իրավիճակի լրջության մասին: Օրինակ, Բաշար ալ-Ասադի վարչակազմի որոշումը՝ երկրով մեկ բռնկված հուզումները ճնշելու համար գործի դնել բանակը, խոսում է այն մասին, որ ոստիկանական համակարգն այլևս ի վիճակի չէ լուծել իր առջև դրվող խնդիրները: Այլ կերպ ասած՝ հուզումներով բռնկված քաղաքներում ոստիկանությունը եթե չի էլ կազմալուծվել, ապա ընդհուպ մոտեցել է այդ վիճակին: Մյուս կողմից, իրավիճակի լրջության մասին է խոսում իշխանությունների որոշումը՝ հուզումների ճնշմանը ներգրավել ծանր՝ զրահատակային զորամիավորումներ: Եթե սրան գումարենք վերջին մեկ ու կես ամսվա ընթացքում ստացված տեղեկությունները, որ յուրաքանչյուր

շաբաթ զոհվածների թիվը կազմում է մի քանի տասնյակ, ապա պատկերը կարծես թե պարզ է:

Բայց Սիրիայում ընթացող զարգացումների նշանակությունն աստիճանաբար դուրս է գալիս այդ երկրի սահմաններից՝ ձեռք բերելով մերձավորարեւելյան քաղաքականության գործոնի կարգավիճակ: Եվ այստեղ առանձնանում են երկու հանգամանք:

Առաջինը վերաբերում է սիրիական պետության, հետեւաբար՝ սիրիական սահմանների կենսունակությանը: Այդ հարցը հատկապես ակտուալ է Սիրիային հարեւան Իրաքում Սադամ Յուսեյնի վարչակազմի տապալումից հետո, երբ պարզվեց, որ 20-րդ դարում ստեղծված Իրաք պետությունն ունի կենսունակության լուրջ խնդիր եւ իր թուլությամբ ու մասնատվածությամբ պարարտ հող է ստեղծում Մերձավոր Արեւելքում սահմանների նոր վերածենման համար: Նույնը կարելի է վերագրել Սիրիային: Միայն եթե Իրաքի դեպքում տվյալ պետական միավորման քայքայման սկիզբը դրվեց 2003թ. ամերիկյան ներխուժմամբ, Սիրիայի պարագայում այդ սկիզբը կարող են դառնալ ներկայիս ժողովրդական հուզումները:

Չարգացումները Սիրիայում, անշուշտ, արաբական հասարակությունում ընթացող հեղափոխական ալիքի համատեքստում են: Եվ այդ առումով, այսօր ամենահավանական սցենարն է դիտվում այդ զարգացումների արդյունքում Սիրիայում արդեն չորս տասնամյակ իշխող ալ-Ասադների վարչակազմի թուլացումը, իսկ հեռանկարում՝ տապալումը: Բայց գլխավոր հարցը վարչակազմը չէ: 1946թ. ֆրանսիական նախկին գաղութի սահմաններում (Օսմանյան կայսրության փլուզումից հետո արհեստականորեն գծված սահմաններում) ստեղծված ներկայիս Սիրիա պետության համակարգային թուլության մասին են վկայում թե՛ 1946–1970թթ. ընթացքում տեղի ունեցած բազմաթիվ պետական հեղաշրջումները, թե՛ 1970-ից մինչ օրս այդ երկրում հաստատված ավտորիտար համակարգը: Փաստն այն է, որ ներկայիս Սիրիան իր գոյության ժամանակաշրջանի 2/3-րդն անցկացրել է ալ-Ասադների ավտորիտար վարչակազմի ներքո: Յետեւաբար, վարչակազմի թուլացումը, առավել եւս տապալումը չի կարող բացասական հետեւանքներ չունենալ պետության համար, ու այդ իմաստով զուգահեռներ կան հարեւան Իրաքի հետ:

Երկրորդ հանգամանքը Սիրիայում մոտ երկու միլիոնի հասնող քրդաբնակ շրջանների¹ առկայությունն է: Ի տարբերություն Թունիսի, Եգիպտոսի, Լիբիայի, Եմենի ու Բահրեյնի (ուր, ինչպես հայտնի է, այս տարվա ընթացքում ծավալված ժողովրդական հուզումները կամ բերեցին տասնամյակների պատմություն ունեցող վարչակարգերի տապալմանը,

կա՛մ լրջորեն սասանեցին իշխող համակարգերը), ժողովրդական հուզումները Սիրիայում կարող են լուրջ ազդակ հաղորդել քրդերի անկախական շարժմանը (ինչն այսօր հանդիսանում է Սիրիայով զբաղվող ամերիկյան, բրիտանական ու հատկապես թուրքական փորձագետների հիմնական գնահատականը):

Ե՛հիշտ է, փետրվարի կեսերից Սիրիայում շարունակվող հուզումների ֆոնին զուտ քրդական ելույթների մասին տեղեկությունները հատուկենտ են, իսկ եղածներն էլ վերաբերում են բողոքի ակցիաների դուրս եկած սահմանափակ թվով մարդկանց (մի քանի հարյուր), սակայն ուշադրություն գրավեց նախագահ Բաշար ալ-Ասադի ապրիլի 7-ի հրամանագիրը, որով նա քաղաքացիություն շնորհեց Սիրիայում ծնված ու բնակվող մոտ 300 հազար քրդերի²:

Ալ-Ասադի այդ քայլն ամենալուրջ զիջումն էր, որ նախորդ տասնամյակների ընթացքում արվել էր պաշտոնական Դամասկոսի կողմից քրդերին³, ինչը ցույց է տալիս, որ այնտեղ անհանգստացած են քրդերի հնարավոր ակտիվացմամբ:

Սիրիայում տիրող իրավիճակից անհանգստացած են նաեւ Անկարայում, ու պետք է ենթադրել, որ անհանգստության հիմքում դարձյալ ընկած է քրդական հարցը, կամ այն գլխավոր պատճառներից մեկն է:

Թուրքիան եւ քրդերը

Հունիսի 12-ին Թուրքիայում տեղի են ունենալու խորհրդարանական ընտրություններ. իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը (ԱԶԿ) նպատակ ունի նվաճել ոչ միայն խորհրդարանի աթոռների մեծամասնությունը, այլեւ ձեռք բերել սահմանադրական մեծամասնություն:

Այս պահի դրությամբ ընդունված է համարել, որ ԱԶԿ-ն իր այդ նպատակին հասնելու ճանապարհին չունի քաղաքական լուրջ մրցակիցներ⁴, իսկ միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետեւանքներն էլ թուրքական տնտեսությունում ըստ էության հաղթահարված են:

Միակ խնդիրը, որ տեսնում են ԱԶԿ-ում եւ որից փորձում են օգտվել նրա հակառակորդները՝ քրդական հարցն է:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ վերջին երկու տարիների ընթացքում Էրդողանի կառավարությունը փոխեց իր մոտեցումը քրդերի նկատմամբ, եւ երկխոսություն սկսվեց անգամ ՔԲԿ առաջնորդ Աբդուլա Օջալանի հետ: Արդյունքներից մեկն այն եղավ, որ 2010թ. օգոստոսին զինադադար կնքվեց Անկարայի ու ՔԲԿ-ի միջեւ: Զինադադարը ձեռնտու էր ԱԶԿ-ին, քանի որ այն հնարավորություն էր ստեղծում Էրդողանի

գլխավորած քաղաքական ուժին ընտրությունների ժամանակ ձայներ հավաքել թե՛ քրդաբնակ շրջաններից⁵ (քանի որ տրվել էին խոստումներ, որ քրդերին հուզող հարցերը լուծում կստանան), թե՛ թուրք ազգայնականների ընտրազանգվածից (քանի որ թուրք ընտրազանգվածին ներկայացվում էր, թե Էրդողանի կառավարությանը հաջողվել է զսպել քրդերի «անջատողական» նկրտումները):

Մինչդեռ, առճակատումը քրդերի հետ ԱԶԿ-ին զրկում է այդ երկու խոշոր ընտրազանգվածներից (քրդերը կքվեարկեն քուրդ թեկնածուների օգտին, իսկ քեմալիստներն ու ազգայնականներն ավելի շատ ձայն կստանան թուրք ընտրազանգվածից՝ շահարկելով Էրդողանի ձախողված քրդական քաղաքականությունը):

Ձարգացումներն ընթացան վերջին տարբերակով՝ ոչ ի նպաստ ԱԶԿ-ի, եւ փետրվարի 28-ին ՔԲԿ-ն հայտարարեց զինադադարից միակողմանի դուրս գալու մասին (քանի որ, ինչպես նշվեց, ԱԶԿ-ն չէր իրականացնում քրդերին տված իր խոստումները):

Ներկա դրությամբ ԱԶԿ-ի ու քրդերի միջեւ որեւէ համաձայնության մասին խոսելու հիմքեր չկան: Դեռ ավելին՝ մայիսի 4-ին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայի Էրդողանի ավտոշարասյան վրա տեղի ունեցած հարձակման պատասխանատվությունը ստանձնեց հենց ՔԲԿ-ն: Եթե դա համապատասխանում է իրականությանը, ապա այն կարող է վկայել, որ ընտրությունների շեմին քրդերը փորձում են ճնշում գործադրել Էրդողանի կառավարության նկատմամբ՝ զիջումներ կորզելու ակնկալիքով: Թե ինչի դա կարող է հանգեցնել, ցույց կտա ժամանակը, սակայն եթե մինչեւ ընտրություններ կողմերը չզան համաձայնության, դա կարող է նշանակել մի բան՝ ընտրություններից հետո Թուրքիայի ներքաղաքական օրակարգում կրկին վեր է հառնելու քրդական խնդիրը, եւ այդ համատեքստում զարգացումները հարեւան Սիրիայում ու Իրաքում թուրքերի համար լինելու են լրացուցիչ գլխացավանք⁶:

Իրաքն ամերիկյան ռազմուժի հեռանալուց հետո

Ըստ նախնական պայմանավորվածության, ամերիկյան ռազմուժը պետք է թողնի Իրաքը մինչեւ այս տարվա վերջ: Եթե ամերիկացիներն իրոք դուրս գան Իրաքից կամ այն աստիճան կրճատեն իրենց ռազմական ներկայությունն այնտեղ, որ գործնականում այլեւս չկարողանան լրջորեն ազդել ներիրաքյան զարգացումների վրա, ապա այդ նոր իրավիճակը չի կարող իր ազդեցությունը չունենալ իրաքյան Քուրդիստանի վրա:

Այսօր Բաղդադի կենտրոնական կառավարության ու իրաքյան Քուրդիստանի իշխանությունների միջև շատ դեպքերում ռազմական բախումներ չեն ծագում /կապված տարածքային վեճերի (Քիրքուկ ու հարակից շրջաններ), էներգակիրներին վերաբերող հարցերի (իրաքյան Քուրդիստանում գտնվող նավթի, գազի հանքեր) ու անվտանգության ոլորտի լիազորությունների հետ/, որովհետև առկա է ամերիկյան ռազմուժը: Սակայն ինչ վերաբերում է հեռանկարին, երկու կողմն էլ ունեն մտավախություններ եւ կարծես թե նախապատրաստվում են վատագույն տարբերակին: Այդ մասին պարզորոշ վկայում են իրաքյան Քուրդիստանի կառավարության վերջին քայլերը, երբ 2010թ. նոյեմբերին ու այս տարվա փետրվարին քրդական զորամիավորումները՝ առանց Բաղդադի կենտրոնական կառավարության համաձայնությունը նախօրոք ստանալու, տեղաբաշխվեցին Քիրքուկ քաղաքում ու քաղաքին հարակից շրջաններում:

Նման պայմաններում Իրաքից ԱՄՆ հեռանալը պետք է որ միայն հանգեցնի Բաղդադից իրաքյան Քուրդիստանի հետագա տարանջատվելուն՝ դրանից բխող հեռանկարներով, քանի որ Իրաքի կենտրոնական կառավարության հետ սուր խնդիրները կարգավորելու մեխանիզմի բացակայությունը (ինչի մասին են վկայում քրդական զորամիավորումների վերոհիշյալ տեղաբաշխումները) հիմք են տալիս ենթադրելու, որ իրաքյան Քուրդիստանում շեշտը դնելու են ոչ թե Բաղդադի հետ «լեզու գտնելու», այլ սեփական ինքնիշխանությունն ամրապնդելու տարբերակի վրա:

¹ Ըստ միջազգային տարբեր գնահատականների, Սիրիայում բնակվում է շուրջ 2 մլն քուրդ կամ Սիրիայի ողջ բնակչության գրեթե 10%-ը:

² Սիրիայի մոտ երկու միլիոնանոց քրդական փոքրամասնության իրավունքների հարցը մի քանի տասնամյակ է՝ չի իջնում այդ երկրի քաղաքական օրակարգից: Ըստ որոշ հաշվարկների, Սիրիայում քաղաքացիություն չունեն մինչև կես միլիոն քրդեր:

³ Այդ քայլը, իհարկե, ողջունվեց սիրիացի քրդերի առաջնորդների կողմից, սակայն անմիջապես էլ հնչեցին հայտարարություններ, թե դա չի նշանակում, որ քրդերը դադարեցնելու են իրենց պայքարը սեփական իրավունքների համար: Օրինակ, Բաշար ալ-Ասադի որոշման հրապարակման հենց հաջորդ օրը Սիրիայի քրդերի առաջնորդներից Հաբիբ Իբրահիմը հայտարարեց, թե «իր ժողովուրդը

կշարունակի ոչ բռնի մեթոդներով պայքարը քաղաքացիական իրավունքների ու ժողովրդավարության համար», իսկ Քրդական բանվորական կուսակցության (ՔԲԿ) ղեկավարներից Մուրադ Գարիլանը կոչ արեց ալ-Ասադին ձեռնարկել իրական քայլեր՝ Սիրիայում քրդերի իրավունքները պաշտպանելու համար, «այլապես քրդական ապստամբությունն ավելի հուժկու կլինի, քան արաբականը»:

4 2003թ. ի վեր ԱԶԿ-ի կողմից տարվող նպատակաուղղված քաղաքականության հետևանքով ներկայում էապես թուլացած են նրա հիմնական երկու հակառակորդները՝ բանակն ու հիմնական ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական կուսակցությունը:

5 Վերջին տվյալների համաձայն, ներկայում Թուրքիայի քաղաքացիների չորսից մեկը ազգությամբ քուրդ է: Այսինքն՝ 74 միլիոնանոց Թուրքիայում քրդերի թիվը կազմում է ավելի քան 18 միլիոն:

6 Պատահական չէ, որ սիրիական հուզումների ֆոնին՝ ապրիլ ամսվա ընթացքում երկու անգամ Դամասկոս մեկնեց Թուրքիայի ազգային հետախուզության (MIT) պետ Չաքան Ֆիդանը: Նրա երկրորդ այցից հետո՝ ապրիլի 28-ին, Թուրքիայի Ազգային անվտանգության խորհուրդը 6 ժամանոց նիստից հետո հանդես եկավ հայտարարությամբ՝ Սիրիայի իշխանություններին կոչ անելով երկրում իրականացնել բարեփոխումներ եւ այդ առումով Անկարայի օգնությունն առաջարկելով Դամասկոսին:

ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ *Արաքս Փաշայան*

2011-ից ի վեր արաքական աշխարհում սկսված հեղափոխական շարժումները, որ թունիսում եւ Եգիպտոսում ուղեկցվեցին իշխանափոխությամբ, իսկ արաքական այլ երկրներում (Ալժիրում, Եմենում, Յորդանանում, Սիրիայում, Բահրեյնում եւ այլն)՝ հակակառավարական հուժկու ելույթներով, օրակարգային են դարձրել արաքական երկրների զարգացման հեռանկարի հարցը:

Արաքական երկրներում սկսված ժողովրդական ելույթներն, ինչ խոսք, անակնկալ են, սակայն դրանք աննախադեպ չեն: Արաքական երկրների նորագույն պատմության վերջին շրջանում արդեն երկրորդ անգամ է, ինչ «արաքական փողոցը», անտեսելով անգամ ռեժիմների կողմից իրականացվող բռնաճնշումները, նման կերպով ընդվզում է:

Հուզումների վերջին նմանօրինակ ալիքը կապված էր 20-րդ դարի առաջին կեսին Միջին Արեւելքի եւ Հյուսիսային Աֆրիկայի (Մադրիբ) արաքական երկրներում խնորվող ազգային-ազատագրական շարժումների հետ, որոնք այն ժամանակ ուղղված էին արտաքին ուժերի, մասնավորապես՝ արեւմտյան իմպերիականության եւ Իսրայելի դեմ: Հենց այդ շարժումների արդյունքում, արդեն 1940–1970-ականներին, արաքական երկրները կարողացան անկախություն նվաճել: Դրանց մի մասում իշխանության եկան ազատագրական շարժումները ղեկավարած էլիտաները, որոնք հիմնականում զինվորականներ էին՝ տոգորված արաքական ազգայնականության գաղափարներով: Արաքական երկրների մեկ այլ հատվածում, մասնավորապես՝ Օոցի երկրներում, իշխանությունը վերջնականապես անցավ առանձին դինաստիաների, որոնք պատմական տեւական ժամանակահատվածում ռազմական եւ քաղաքական ազդեցություն էին ունեցել տվյալ ռեգիոններում:

Անկախության նվաճումից հետո արաքական երկրները, բնականաբար, ընտրեցին զարգացման տարբեր ուղիներ: Պայմանավորված Սառը պատերազմի իրողություններով՝ նրանք հիմնականում հայտնվեցին երկու հակադիր ճամբարներում, որդեգրեցին զարգացման սոցիալիստական կամ կապիտալիստական ուղիներ:

Ժամանակի ընթացքում բյուրեղացավ նաեւ զարգացման երրորդ կամ

իսլամական ուղու տեսությունը, որին էականորեն խթանեց Իրանի 1979թ. իսլամական հեղափոխությունը: Այս ուղու կողմնակիցները, համարելով, որ Միջին Արևելքում ձախողվել են թե՛ սոցիալիստական եւ թե՛ կապիտալիստական մոդելները, անհրաժեշտ էին համարում ընթանալ այլընտրանքային ճանապարհով: Սակայն արաբական վարչակարգերը ժամանակի ընթացքում քաղաքական դաշտից դուրս մղեցին ոչ միայն իսլամիստներին, այլեւ գաղափարական տարբեր մոտեցումներ ունեցող ընդդիմադիրներին:

Արաբական երկրներում առկա ձախողումները շատուշատ դեպքերում կապված են հենց վարչակարգերի քաղաքական վարքաբանության հետ: Այդ երկրների հասարակությունների առաջընթացին մեծ հարված հասցրին խոսքի ազատության եւ մարդու իրավունքների սահմանափակումները: Արդյունքում՝ էականորեն տուժեց մտավոր ոլորտը, ասպարեզից դուրս մղվեց այլախոհությունը, արաբական հասարակությունները հայտնվեցին միջնադարյան ավանդույթներով խարսխված գորշ ու քարացած իրականության մեջ: Այս ամենին գումարվեցին սոցիալ-տնտեսական խնդիրները՝ անհավասար մրցակցային պայմանները, սոցիալական անհավասարությունը, բեւեռացումն ու գործազրկությունը:

Այս իմաստով, արաբական աշխարհում 2011-ից ի վեր սկիզբ առած եւ դոմինոյի էֆեկտով ընթացող հակակառավարական հուզումներն ունեն սոցիալ-քաղաքական հստակ պատճառներ եւ կապված են տասնամյակներ ի վեր կուտակված համակարգային խնդիրների, ի վերջո՝ արդիականացման պահանջի հետ: Ընդվզող հասարակությունները, որոնց մեջ երիտասարդությունն ամենահանգուցայինն է, ի ցույց դրեցին, որ 21-րդ դարում այլեւս չեն ուզում ապրել հնացած արժեքներով: Դրանք, ի տարբերություն նախորդ սնանատիպ հուզումների, դրսեւորվեցին ավելի տարերային ձեւով՝ առանց գաղափարախոսական համակարգված տեսությունների ու առաջնորդող քաղաքական ուժերի: Հենց նշված գործոններով է նաեւ պայմանավորված արաբական երկրների ոչ միայն ներկա, այլեւ հետագա զարգացումների անորոշությունը:

Հասարակական-քաղաքական արդի գործընթացները եւ դրանց հեռանկարը թե՛ արաբական հասարակություններում եւ թե՛ փորձագիտական հանրության շրջանում ակտիվ քննարկումների առարկա են դարձել: Օրակարգային են այն հարցերը, թե որքանով արաբական աշխարհում հնարավոր կլինի ձեւավորել իրական ժողովրդավարություն, տնտեսական եւ սոցիալական որոշակիորեն գոհացուցիչ պայմաններ: Ի վերջո, զարգացման ի՞նչ մոդելներ կընտրեն արաբական երկրները: Շրջանառվող փորձագիտական տեսակետների համաձայն, Միջին

Արեւելքում պայքար է ծավալվում հիմնականում երեք՝ արեւմտյան, իսլամիստական եւ թուրքական մոդելների շուրջ: Չի բացառվում, որ տեսանելի ապագայում ի հայտ գան նաեւ քաղաքական այլ հայեցակարգեր:

Արեւմտյան ուղղությունը կապված է «Մեծ Մերձավոր Արեւելքի» ստեղծման հետ: Այս հայեցակարգը մշակվեց դեռեւս 1990-ականների սկզբներին, ամերիկյան ստրատեգների կողմից եւ միտված է արեւմտամետ վարչակարգերի ձեւավորմանը, տարածաշրջանում արեւմտյան արժեքների ներդրմանը: Ջորջ Բուշ կրտսերի հեռանալուց հետո այս ծրագիրը կարծես մոռացության էր մատնվել, սակայն ներկա փուլում կրկին արդիականացել է՝ կապված արաբական գործընթացների, ինչպես նաեւ Պակիստանում եւ Աֆղանստանում (որոնք համարվում են Մեծ Մերձավոր Արեւելքի արեւելյան դարպասները) ԱՄՆ-ի կողմից իրականացվող ռազմական գործողությունների հետ: Ծիշտ է, հակաարեւմտյան եւ հակաիսրայելական կողմնորոշում ունեցող արաբական հասարակությունների համար նշված ուղին հազիվ թե ընդունելի լինի, սակայն դրա ներդրման գործընթացն, ըստ ամենայնի, վաղուց արդեն սկսվել է: Այն նպատակ ունի ոչ միայն ապահովել ԱՄՆ-ին անհրաժեշտ էներգետիկ ռեսուրսներով, այլեւ կանխել այդ պետության ազգային անվտանգությանն ու հետաքրքրություններին սպառնացող ցանկացած իրողություն, որ կծեւավորվի իսլամական աշխարհում: Շատերը «կառավարելի քաոսի» մասին տեսությունը կապում են ԱՄՆ-ի միջինարեւելյան ներկա քաղաքականության հետ:

Երկրորդ տեսությունը նկատի է առնում իսլամական տիպի պետությունների ստեղծումը, որոնց հիմքում ընկած կլինեն շարիաթական նորմեր: Այս պարագայում, իշխանության կարող են գալ կամ իշխանության մաս դառնալ, ասենք, «Մուսուլման եղբայրները» կամ մնանօրինակ կառույցներ, որոնք թեւ հրաժարվել են ծայրահեղական մոտեցումներից, սակայն այդքան էլ արդիականանալու մտադրություն չունեն եւ պատրաստվում են ղեկավարել իսլամական միջնադարյան հայեցակարգերով:

Յատկանշական է, որ շարունակում են ամրապնդվել փորձագիտական այն տեսակետները, որոնք պնդում են, թե արաբական երկրներում կհաղթի իսլամիզմը: Ըստ այդմ՝ արաբական հասարակություններն իրականում միտված են դեպի իսլամիզմը, որն էլ կլցնի առկա քաղաքական վակուումը: Այս տեսակետի կողմնակիցները, ըստ ամենայնի, հաշվի չեն առնում այն խորքային խնդիրներն ու դժվարությունները, որ ձեւավորվել են իսլամիստական շարժումների ներսում: Իսլամիզմի վերելքն ընդունված է համարել անցյալ դարի 80–90-ականները, որին,

ինչպես նշում է ֆրանսիացի արաբագետ Ժիլ Կեպելը, հաջորդեց պոստ-իսլամիզմի դարաշրջանը:

Արդյո՞ք 21-րդ դարում կրոնական սկզբունքների վրա խարսխված արժեքային համակարգերը կշարունակեն պոպուլյար մնալ թեկուզ որոշակիորեն պահպանողական, սակայն ժողովրդավարական պահանջներ ներկայացնող արաբական հասարակություններում, տեսանելի կդառնա միայն խորհրդարանական կամ նախագահական ընտրությունների ժամանակ:

Այն, որ իսլամիստական տեսություններն առանձին արաբական երկրներում որոշակիորեն սպառել են իրենց, ապացուցվում է Թունիսի եւ Եգիպտոսի հեղափոխությունների օրինակով: Փաստ է, որ դրանք իրականացրին ոչ թե իսլամիստները, այլ հիմնականում կրթված եւ առաջադեմ երիտասարդները, որոնք առաջ էին քաշում ժողովրդավարական գաղափարներ: Հատկանշական է, որ հեղափոխությունները չընթացան հակաարեւմտյան կամ հակահրեական կարգախոսների ներքո, ինչպես ընդունված է քաղաքական իսլամի հռետորաբանության մեջ, այլ կենտրոնացած էին ներքին խնդիրների վրա:

Ինչ վերաբերում է թուրքական մոդելին, այն ենթադրում է իսլամի եւ ժողովրդավարության միաձուլում եւ, որպես այդպիսին, ներդրվել է Թուրքիայում, 2002-ին, Արդարություն եւ զարգացում կուսակցության իշխանության գալուց ի վեր: Սակայն տնտեսական եւ քաղաքական խնդրահարույց իրավիճակում հայտնված արաբական երկրներում որքանով այդ մոդելը կաշխատի, դժվար է ասել: Այն, որ թուրքական մոդելն այստեղ որոշակի կողմնակիցներ ունի, ակնհայտ է: Շատերը միեւնույն ժամանակ գիտակցում են, որ թուրքական մոդելի ներդրումն անմիջականորեն կապված է նեոօսմանիզմի գաղափարախոսության հետ, որը ենթադրում է Մերձավոր Արեւելքում Թուրքիայի քաղաքական դերի եւ ազդեցության մեծացում: Պաշտպանելով հակակառավարական շարժումները եւ ձգտելով թուլացնել արաբական աշխարհը՝ Թուրքիայի ջանքերն իրականում ուղղված են հենց նշված խնդրի իրականացմանը:

Ամեն պարագայում, արաբական երկրներում զարգացման հեռանկարների հետ կապված տեսանելիություն դեռեւս չկա: Այստեղ նույնիսկ որոշակիորեն հոռետեսական տրամադրություններ են սկսել ի հայտ գալ: Օրեցօր մեծանում է արտագաղթել ցանկացողների թիվը, ինչը գլխացավանք է դարձել Արեւմուտքի համար:

Խնդիրն այն է, որ արաբական երկրներում հասարակական-քաղաքական բարեփոխումների, այդ թվում՝ ժողովրդավարական ազատությունների ներդրման համար (հանուն որի այդքան եռանդուն պայքար

ծավալվեց) շատ երկար ժամանակ է անհրաժեշտ: Այստեղ չկան ոչ միայն ինստիտուցիոնալ հիմքեր ու ավանդույթներ՝ ժողովրդավարության զարգացման համար, այլև համընդհանուր ժողովրդականություն վայելող քաղաքական ուժեր կամ գոնե խարիզմատիկ գործիչներ, որոնք ի զորու կլինեն հաջողությամբ ղեկավարել հետագա գործընթացները:

Տարածաշրջանի ամենասուր խնդիրներից շարունակում են մնալ ժողովրդագրական աճի բարձր տեմպերը եւ գործազրկությունը: Արաբական աշխարհում երիտասարդության զբաղվածությունը չի անցնում 50 տոկոսը, շատ դեպքերում անգամ ցածր է այդ ցուցանիշից: Մինչդեռ իսլամական հասարակություններում մինչեւ 30 տարեկան երիտասարդները բնակչության ընդհուպ մինչեւ 70 տոկոսն են: Արդյո՞ք կարող են արաբական վարչակարգերը տեսանելի ապագայում յուրաքանչյուր տարի հարյուր հազարավոր նոր աշխատատեղեր ստեղծել, բարձրացնել բնակչության կենսամակարդակն այնքան, որպեսզի հեղափոխություն իրականացրած զանգվածների համար դրա արդյունքները գոհացուցիչ լինեն:

Արաբական երկրների հեռանկարի վերաբերյալ հետաքրքիր է Ձբիգնեւ Բժեզինսկու կարծիքը: Վերջինիս համոզմամբ՝ «արաբական գարունն» այդ երկրներում գրեթե ոչինչ չի փոխի, փոխարենը իշխանության կբերի հակաարեւմտյան ուժերի: Քաղաքական զարթոնքը կհանգեցնի ոչ թե ժողովրդավարական ռեժիմների ձեւավորմանը, այլ ընդամենը՝ պոպուլիզմի, հաշվի առնելով այն, որ ժողովրդավարությունը երկարատեւ գործընթաց է, մինչդեռ պոպուլիզմը միշտ էլ գրավում է զանգվածներին:

Արաբական երկրների զարգացման հեռանկարները, ճիշտ է, դեռեւս մշուշոտ են, սակայն մի բան հստակ է. այս պետություններն այլեւս չեն կարող լինել առաջվա նման: Հասարակական-քաղաքական տեղաշարժերն ու վերածելումները, այդ թվում՝ վարչակարգերի փոփոխությունները, անխուսափելի են դարձել: Որքանով արդյունավետ կլինեն եւ ինչպես կընթանան փոփոխություններն արաբական երկրներից յուրաքանչյուրում, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից, դժվար է կանխատեսել:

ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ *Սուրեն Սարյան*

Մերձավոր եւ Միջին Արեւելքում տեղի ունեցող զարգացումները բարձրացրին նաեւ այն հարցը, թե ինչպես է Իսրայելն ընկալում տարածաշրջանում ի հայտ եկած նոր իրողությունները: Իսրայելը մնացել է կայունության միակ կղզյակը Մարոկոյից մինչեւ Պակիստան ընկած տարածությունում: Այն արդիական պետություն է՝ բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությամբ եւ տարածաշրջանում ամենամարտունակ ռազմական ենթակառուցվածքով, որին գումարվում է ԱՄՆ-ից տարեկան 3 մլրդ դոլարի ռազմական օգնությունը:

Արաբական աշխարհում կատարվածը որոշակի մտահոգություններ առաջացրեց իսրայելական քաղաքական ղեկավարության մոտ: Այդ զարգացումները ստիպեցին Իսրայելին լինել ավելի զգուշավոր իր քաղաքականության մեջ, քանի որ իրենց անկանխատեսելիությամբ դրանք հղի են հրեական պետության համար լուրջ վտանգներով: Մինչ այժմ Իսրայելին հաջողվում էր գտնել գոյակցության բանաձևեր հին արաբական էլիտաների հետ, ինչպես, օրինակ, Եգիպտոսի, Չորդանանի, անգամ Սաուդյան Արաբիայի եւ Լիբիայի հետ: Իսկ այսօր, արաբական հեղափոխությունների հետեւանքով, Իսրայելը կորցնում է տարածաշրջանում «միակ ժողովրդավարական պետության» բրենդը. արդեն ԱՄՆ նախագահը կոչ է անում Իսրայելին հաշվի նստել «նոր արաբական ժողովրդավարությունների» հետ:

Մինչդեռ իսրայելական քաղաքական եւ քաղաքագիտական վերնախավը լրջորեն անհանգստացած է, որ ժողովրդավարության կարգախոսների ներքո արաբական աշխարհում ընթացող շարժումները կբերեն ծայրահեղականության եւ քաղաքական իսլամիզմի համատարած հաղթանակին, ինչպես դա նախկինում կատարվեց Իրանում, Թուրքիայում, Պաղեստինում: Նման վտանգի մասին խոսեց անգամ Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն:

Նշվում է նաեւ, որ տարածաշրջանում վերջին զարգացումներից առաջին շահողը լինելու է Իրանը, որն ընդլայնում է իր տարածաշրջանային ազդեցությունը: Իսրայելում, բնականաբար, շատ վատ ընկալե-

ցին Սուեզի ջրանցքով իրանական ռազմանավերի անցմելու եզիպտոսի նոր իշխանությունների թուլությունը, ինչպես նաև՝ եզիպտա-իսրայելական գազամուղի պայթեցումները: Միաժամանակ, եզիպտոսը դարեցրեց Սինայը եւ Գազան բաժանող պատի շինարարությունը՝ դրանով աջակցություն հայտնելով Գազայում իշխող «Համաս» կազմակերպությանը: Վերականգնվեցին նաև եզիպտա-իրանական դիվանագիտական հարաբերությունները, որոնք խզվել էին Քեմփ Դելիդի հաշտությունն իսլամական հանրապետության այաթոլա առաջնորդների կողմից չընդունվելու հետեւանքով:

Սինչդեռ եզիպտոսը տարիներ շարունակ եղել է արաբների եւ Իսրայելի միջեւ խաղաղության երաշխավորը: Չնայած այն փաստին, որ եզիպտոսի ներկայիս զինվորական իշխանությունը եւ նախագահի հավանական թեկնածուները հայտարարում են, թե Քեմփ Դելիդի համաձայնագիրն ամեն դեպքում շարունակելու է գործել, Սինայի թերակղզում այժմ նկատվում է կենտրոնական իշխանության բավական թուլացում՝ տեղացի բեդվին ցեղերի կողմից ակտիվացման հետեւանքով: Հավանական է համարվում, որ այնտեղ «Սուսուլման եղբայրները» հնարավորություն կստանան հաստատել իրենց վերահսկողությունը, ինչի արդյունքում Սինայը կարող է անջատվել եզիպտոսից եւ Գազայի հետ միասին կազմել իսլամիստական-ծայրահեղական նոր միավորում, որն ուղղակի կսպառնա Իսրայելին հարավից: Գաղտնիք չէ, որ «Համաս» կազմակերպությունը, որը վերահսկում է ներկայումս Գազայի հատվածը, մշտապես համարվել է «Սուսուլման եղբայրների» պաղեստինյան ճյուղավորումը:

Իսրայելական մտահոգությունների մյուս կարեւոր ուղղությունը կապված է Սիրիայի հետ: Անկասկած, Իսրայելը շահագրգռված է Իրանի եւ Սիրիայի միջեւ համագործակցությունը չեզոքացնելու հարցում: Ասադի վարչակարգի թուլացումը կամ տապալումն այս առումով շահավետ է Իսրայելին նրանով, որ դա կբերի Դամասկոսի կողմից Լիբանանում «Հիզբալլահին» եւ Գազայում «Համասին» աջակցության նվազեցմանը: Ասադի վարչակարգի անկման դեպքում Իսրայելը կազատվի միասնական հակաիսրայելական ճակատից, որը բաղկացած է Իրանից, Սիրիայից, «Հիզբալլահից» եւ «Համասից»: Իսրայելի հետախուզության նախկին պետ Մեիր Դագանը համարում է, որ Իսրայելի համար Սիրիայում լավագույն սցենարը կլիներ Ասադի վարչակարգի տապալումը եւ դրանով «Հիզբալլահին» եւ իրանական ազդեցությանը լուրջ հարված հասցնելը:

Մյուս կողմից, Սիրիայում իրավիճակի ապակայունացումը խախտում է այն ստատուս-քվոն, որ հաստատվել էր այստեղ վերջին 40 տարում: Ասադ-հոր եւ որդու վարչակարգերը քիչ թե շատ ապահովում էին զինադադարը սիրիա-իսրայելական սահմանին: Եթե Դամասկոսում վարչակարգ փոխվի, դժվար է ասել, թե նոր սիրիական իշխանություններն ինչ քաղաքականություն կորդեգրեն Իսրայելի ուղղությամբ:

Փորձագետները նշում են, որ Բաշար Ասադն այսօրվա բարդ իրավիճակում ունի հաջողության հասնելու երկու ճանապարհ: Կամ հանձնել Սիրիան Իրանի խնամակալությանը եւ պատերազմ սկսել Իսրայելի դեմ, ինչը, սակայն, սիրիական բանակի համար հաղթանակով չի ավարտվի եւ կբերի սուլունի արաբների համատարած ապստամբությանը, կամ էլ՝ դուրս գալով իրանական ազդեցությունից, գնալ Իսրայելի հետ խաղաղության կնքմանը, որով Սիրիան հետ կբերի Գոլանի բարձունքները, ինչը կհամարվի լուրջ արտաքին քաղաքական հաղթանակ եւ կամրապնդի Ասադի վարչակարգի դիրքերը:

Տասնամյակներ շարունակ Իսրայելն արաբական եւ մահմեդական աշխարհի բնակչության գիտակցության համար կատարում էր ընդհանուր խորհրդանշական թշնամու դերը՝ համախմբելով արաբներին: Դրա նշանակության նվազեցումը կարող է բերել արաբական աշխարհում լուրջ գաղափարախոսական վակուումի՝ ակտիվացնելով արդեն ներխուժման հակասությունները՝ շիիզմ–սուլունիզմ առանցքի շուրջ: Ակնհայտ է, որ Իրաքում սուլունիների եւ շիաների, Սիրիայում՝ ալավիների եւ սուլունիների, Իրանի շիաների եւ Պարսից ծոցի արաբ սուլունիների միջեւ հակամարտությունը որոշակիորեն մոռացության մատնեց մահմեդական աշխարհի ատելությունն Իսրայելի հանդեպ:

Սակայն դա չի նշանակում, թե Իսրայելի համար Մեծ Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող զարգացումներն իրական սպառնալիքներ չեն պարունակում: Իսրայելցի վերլուծաբանները նշում են, որ Իրանի, Եգիպտոսի, Սիրիայի եւ Թուրքիայի հավանական դաշինքն էապես թուլացնում է Իսրայելի անվտանգությունը, թեպետեւ այդ երկրների կողմից ռազմական հարձակումը քիչ հավանական է, քանի որ բաց պատերազմում Իսրայելի պաշտպանության բանակի՝ ՅԱԽԱԼ-ի գերազանցությունն անվիճելի է: Այդուհանդերձ, տեղեկատվություն տարածվեց, որ իսրայելական բանակը հավանական է դիտարկում նոր պատերազմների ծագումը ինչպես Եգիպտական, այնպես էլ սիրիական ճակատներում: Հիմնական սպառնալիքների մեջ նշվում են նաեւ Իրանը, ինչպես եւ «Հիզբալլահը» եւ «Համասը»: Այս առումով, Իսրայելի

բանակն ի վիճակի է դիմակայել վերջիններին, իսկ մեծ պատերազմի դեպքում կստանա լավ հնարավորություն «զտել» Պաղեստինը: Հավանական է համարվում, որ Պաղեստինի անկախության հռչակումից հետո, երբ Արեւմտյան ափը կարող է ուղղակի անցնել «Համասի» վերահսկողության տակ, Իսրայելի պաշտպանության բանակը ստիպված կլինի օկուպացնել արաբական Պաղեստինը, ինչպես դա արեց 1967թ.: Իսկ դա կարող է շրթայական ռեակցիայով բերել Սիրիայի, Իրանի եւ Թուրքիայի միջամտությանը:

Թուրքիայի եւ Իրանի կողմից Իսրայելի հանդեպ համատեղ ճակատի ստեղծումը պայմանավորված է ոչ միայն իսլամական համերաշխության սկզբունքով: Թուրքիան եւ Իրանը Իսրայելի կողմից այսօր առավելապես դիտվում են որպես լուրջ հակառակորդներ, որոնք ձգտում են իրենց օգտին փոխել տարածաշրջանային ստատուս-քվոն:

Այս պայմաններում Իսրայելը մեծ շահագրգռություն է հանդես բերում հյուսիսային Իրաքում Քուրդիստանի ստեղծման հարցում: XX դարում, դեռեւս Դավիթ Բեն Գուրիոնի վարչապետության օրոք ընդունվել էր ոչ արաբական շրջապատի, այսինքն՝ դաշնակիցների ու գործընկերների գոտի ստեղծելու դոկտրինը: Հենց այդ ժամանակ Իսրայելը շփումներ հաստատեց իրաքյան քրդերի հետ եւ սկսեց օգնել նրանց, այդ թվում՝ զենքով եւ քրդական զինյալ խմբերի վարժեցմամբ: Այս համագործակցությունը շարունակվում է մինչ օրս: Ընդ որում, եթե մինչեւ Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումը Իսրայելն այդ փաստը հերքում էր, ապա այսօր այն չի էլ թաքցվում: Քուրդիստանի հետ գործընկերության միջոցով Իսրայելն ի վիճակի կլինի ձեռք բերել դաշնակից՝ ընդդեմ Իրանի, Սիրիայի եւ Թուրքիայի:

Քրդերին աջակցությանը զուգահեռ՝ Իսրայելը հետապնդելու է Իրանի հետ հարաբերությունների վերականգնման գերնպատակը: Պատահական չէ, որ վերջին օրերին Իսրայելի պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը հայտարարեց, որ եթե նույնիսկ Իրանը ստեղծի միջուկային զենք, այն չի օգտագործի ոչ Իսրայելի, ոչ էլ որեւէ հարեւան երկրի դեմ. «ժամանակն է դադարեցնել խուճապը եւ աշխարհին վախեցնել Իրանի մտացածին սպառնալիքով»: Իսկ նույն Մ.Դազանը նշեց, որ Իրանի միջուկային օբյեկտների ռմբակոծումը հիմարություն կլիներ: Այս առումով Երուսաղեմին մնում է սպասել եւ տեսնել, թե ինչով կավարտվի ներքաղաքական պայքարն Իրանում:

Այս բոլոր զարգացումների ֆոնին ներկայումս Իսրայելը գտնվում է բավական բարդ դիվանագիտական իրավիճակում՝ կապված Պաղես-

տինի հարցում զիջումներ կատարելուն ուղղված Արեւնուտքի ճնշումների հետ: Սակայն երկրի ներսում ուժեղանում են ազգային-պահպանողական ուժերի դիրքերը, որոնք հանդես են գալիս զիջումների դեմ եւ իսլամիստներին կոշտ հակահարվածներ հասցնելու օգտին: Իսրայելում բավական տարածված է այն տեսակետը, որ Օբամայի վարչակազմի քաղաքականությունն ուղղված է հրեական պետության շահերի դեմ՝ քայքայելով արդեն մի քանի տասնամյակ գործող իսրայելա-ամերիկյան ռազմավարական դաշինքը: Իրոք, Վաշինգտոնն, ակտիվորեն առաջ քաշելով «երկու ժողովուրդ–երկու պետություն» բանաձեւը, հստակ պահանջել է Երուսաղեմից հեռանալ պաղեստինյան տարածքներից եւ թույլ տալ արաբական անկախ պետության ստեղծումը՝ Արեւելյան Երուսաղեմ մայրաքաղաքով, ինչպես նաեւ կնքել խաղաղություն Սիրիայի հետ՝ վերադարձնելով Գոլանի բարձունքները: Ավելին, Իսրայելում կարծիքներ են հնչում, որ ինչպես ԱՄՆ-ին այլեւս պետք չեղան Հոսնի Մուբարաքը կամ Մուամար Քադաֆին, այնպես էլ կարող է այլեւս Իսրայելը պետք չգալ, եւ այն զոհաբերեն հանուն «Նոր Մերձավոր Արեւելքի» կերտման ծրագրի:

Սառը պատերազմի տարիներին Իսրայելը հանդիսանում էր Արեւնուտքի ֆորպոստը: Սակայն ԽՍՀՄ քայքայմանը զուգահեռ Իսրայելի դերակատարումը սկսեց լուրջ փոփոխությունների ենթարկվել: Ավելին, Իսրայելը սկսեց ծառայել որպես խոչընդոտ՝ իսլամական աշխարհի հետ Արեւնուտքի հարաբերությունների նորմալացման ճանապարհին: Երուսաղեմում հատկապես շեշտում են այն փաստը, որ ԱՄՆ-ի կողմից «Մուսուլման եղբայրներն» այլեւս չեն համարվում ահաբեկչական կազմակերպություն, այլ քաղաքական ուժ, որի հետ պետք է բանակցել: Համանման վերաբերմունք է ձեւավորվում «Հիզբալլահի» նկատմամբ:

Միեւնույն ժամանակ, հարկ է նշել, որ դեռեւս տարեսկզբին միջազգային ընկերակցության կողմից շատ էին քննարկվում Իսրայելի եւ Պաղեստինի միջեւ բանակցությունները վերսկսելու եւ Իրանի միջուկային օբյեկտներին իսրայելական օդուժի հարվածներ հասցնելու թեմաները: Սակայն արաբական աշխարհում տեղի ունեցող ցնցումները կարծես թե մոռացության մատնեցին դրանք: Ինչպես նշում է իսրայելցի փորձագետ Ալեք Էպշտեյնը, տասնամյակներ շարունակ միջազգային ընկերակցության ուշադրությունը սեւեռված է եղել արաբա-իսրայելական հակամարտության եւ դրա կարգավորման վրա, մինչդեռ վերջին զարգացումների համատեքստում դա այլեւս այնքան էլ կարեւոր չէ:

Միջազգային քաղաքականության այն դոգմատը, որ տարածաշրջանի բոլոր խնդիրները պայմանավորված են չլուծված արաբա-իսրայելական հակամարտությամբ, այլեւս որեւէ ուժ չունի, եւ ներկայումս իրավիճակը կտրուկ փոխվել է:

Մեծ Մերձավոր Արեւելքին սպասում են լրջագույն վերափոխումներ, որոնք հեռանկարում միգուցե հնարավոր կդարձնեն մահմեդական երկրների եւ ժողովուրդների արդիականացումը, ինչը, սակայն, կարող է բավական ցավալի ընթացք ունենալ Իսրայելի համար: Հաշվի առնելով, որ քառսը տարածաշրջանում կարող է տեւական լինել, Իսրայելը շահում է թանկարժեք ժամանակ: Անկասկած, այդ ընթացքում Իսրայելն օգտագործելու է իսլամական աշխարհում տեղի ունեցող զարգացումները սեփական ռեսուրսների ավելացման համար՝ նախապատրաստվելով հետագա վատթարագույն սցենարներին:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գագիկ Տեր-Չարությունյան ՀԱՅ - ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ	1
Ռուբեն Մելքոնյան ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ	6
Հայկ Գաբրիելյան ԹՈՒՐՔԻԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ	12
Հենրի Բերքի ԹՈՒՐՔԻԱՆ ԵՎ ԱՐԱՔԱԿԱՆ ՋԱՐԹՈՆՔԸ	19
Սեւակ Սարուխանյան ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐՆ ԻՐԱՆՈՒՄ	23
Արտաշես Տեր-Չարությունյան ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՔՐԴԵՐԸ	28
Արաքս Փաշայան ԱՐԱՔԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋ	34
Սուրեն Սարյան ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԻՍՐԱՅԵԼԸ	39

*Շապիկին պատկերված է
Յոչանց գետի հովիտը
(Արցախ)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: *Հեռ. 58 04 91, 58 04 83:*
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՍՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: